

«լինին ոմանք տղընդերք... ջրգողեալք», «զօրէն քաղնթատաց թոթով թարբառք նոցա»:

Ժողովրդական մտածողութեան ուրոյն արտայայտութիւն է նաեւ փոխաբերացումը: Փիլոնի թարգմանութիւններում այդպիսի օրինակներ կան. «Իսկ մահկանացուիս զի՞նչ արժան է բարձրավիզ լինել, փքանալ... առ նմանս» (1892, 233): «Իսկ առ իմ խոս, չար բարքն եւ դժնեայ խնդայր եւ ոտնահարէր» (1826, 157): Փոխաբերացումը կիրառութեամբ հանդէս են գալիս վիզ-պարանոց համանիշերը՝ «բարձրապարհանոցութեամբ վզանիս» (1826, 434): Իսկ համանշային շարքի միւս անդամը՝ ուլն, չի փոխաբերացում. հետեւեալ օրինակում այն իր բուն կիրառութեամբ է. «Եւ արջք բաժանեալ ընդունեն եւ զմիջոց բուռն հարեալ ուժգնապէս զարկուցանեն եւ պատեն ոտիւքաց արուեստապէս կարթելով» (1822, 151): Ըստ երեւոյթին, ուլն նուազ յաճախական էր, այդ պատճառով էլ չի փոխաբերացուել:

Մանրամասն չենք քննարկում փոխաբերացման զանազան դրսեւորումները V դարում կամ Փիլոնի թարգմանութիւններում: Նշենք միայն, որ փոխաբերացումը կենդանի, բանաւոր խօսքի առանձնատկութիւնն է, որը առկայանում է եւ Փիլոնի թարգմանութիւններում, իսկ վերջիններս ոչ միայն իրենց բովանդակային, այլեւ լեզուական առանձնատկութիւնների տեսակէտից V դարի հայ մատենա-

գրութեան ուշագրաւ գործերից են, որոնց բառապաշարային եւ քերականական իւրայատկութիւնների մանրագնին քննութիւնը կը նպաստի այդ դարաշրջանի լեզուական եւ բանասիրական բազմաթիւ երեւոյթների գնահատմանն ու վերագնահատմանը:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ՕԳՏԱԳՐՈՒԹԻՒԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առաքելեան - Վ. Առաքելեան, Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան, Երեւան, 1981:

ԱՐՄ. - Հ. Աճառեան, Հայերէնի արմատական բառարան, հտ. 1-4, Երեւան 1971-1979:

Բագրատունի - Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւնն ի պէտս զարգացելոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1852:

Բուզ. - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Մուրադեան - Ա. Մուրադեան, Յուստինիանոսի դարի հայերէնի քերականական տերմինաբանութեան ստեղծման գործում, Երեւան, 1971:

ՀԱ - «Հանդէս ամսօրեայ»

Յովհաննիսեան - Լ. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Երեւան, 1990:

Адонц - Н. Адонц, Дионисий Фракийский и Армянские толкователи, Петроград, 1915.

«ՎԱԶԱԳԱՆԻ ՎԷՊ»-Ը ԵՒ ԱՐԾԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ Դ-Ձ ԴԱՐԵՐԻ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ

Ալեքսան Յակոբեան

Ժ դարի վերջի հայ պատմիչ Մովսէս Դասխուրանցու (մատենագրութեան եւ պատմագրութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից» աշխատութիւնը գրեթէ բառացի արտագրութեամբ պարունակում է Հայոց Արեւելից կողմանց վաղմիջնադարեան գրչութեան կենտրոններում ստեղծուած պատմական ու գրական բազմաբնոյթ երկեր¹: Հայագէտները եւ արեւելագէտները վաղուց արդէն փորձում են ճշգրտել այդ երկերի բնագրային սահմանները եւ ժ դարի հեղինակի միջամտութիւնները, որի շնորհիւ հնարաւոր է դառնում, իբրեւ սկզբնաղբեր, նրանց առաւել հաւաստի օգտագործումը²: Աղբերագէտի համար կարեւոր է նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ի ձեւագրական նիւթից բնօրինակային ընթացումների վերհանումը, որն էապէս հեշտացուեց 1983 թ. շուրջ երեք տասնեակ ձեւագրերի հիման վրայ պրոֆեսոր Վարազ Առաքելեանի պատրաստած համեմատական հրատարակութեան շնորհիւ³:

Դեռեւս ժժ դարի գիտնականները նկատել են, որ «Պատմութիւն Աղուանից»-ում Վաչագան Բարեպաշտ թագաւորին վերաբերող հիմնական տեղեկութիւնները գալիս են ոչ թէ ժ դարի պատմիչից, այլ իրադարձութիւններին ժամանակով մօտ կանգնած կամ ականատես երկասիրողից: Այդ հատուածների մանրակրկիտ աղբերագիտական քննութեամբ հայր Ներսէս Ակիւնեանը հաստատեց ժ դարի հեղինակի կողմից արտագրուած մի առանձին երկի գոյութիւնը («մէկ գրչէ են Ա. 5, 6 (մասամբ), 14-23 գլուխները:

նախնաբար գրուած իբրեւ մէկ ամբողջութիւն»⁴: Խորանալով հարցի քննութեան մէջ՝ Կիմ Ղահրամանեանը եզրակացրեց, որ «Պատմութիւն Աղուանից»-ի Ա գրքի ժՁ-իՁ գլուխները Ե դարի վերջի ակադեմիկոս հեղինակի ստեղծագործութիւն են, իսկ Ա.ժ գլխի վերնագիրը («Կեանք եւ վարք եւ կարգաւորութիւնք (եւր կարգաւորութիւնք) Աղուանից, որ ի Վաչագաւորութիւնք եղան, եւ գիւտք (a գիւտ) նշխարաց սրբոց»⁵) բնօրինակում հաւանաբար եղել է ոչ թէ այդ գլխինը (նրանում պատմում է ընդամէնը Պերոզ արքայի չարագործութիւնների ու կործանման մասին), այլ ամբողջ երկինը, որը ժ դարի հեղինակը բաժանել է գլուխների եւ վերնագրել դրանք⁶:

Մեր նախորդ աշխատանքներում, ելնելով երկի ոճական առանձնատկութիւններից, պայմանականօրէն անուանել ենք այն «Վաչագանի վէպ» եւ ցոյց տուել, որ նրա օրգանական մասն է նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.ժ գլուխը: Վերջինս պարունակում է այն պատմութիւնների սկիզբը (Գրիգորիսի, նրա բերած Ձաքարիա եւ Պանդալէոն սրբերի նշխարների), որոնց շարունակութիւնը գտնում ենք Վաչագան Բարեպաշտին վերաբերող գլուխներում: Միաժամանակ պարզաբանել ենք, որ տուեալ երկի հետ գոնէ ուղիղ կապ չունեն Ա.իդ-իդ գլուխները. դրանցում ներկայացուած են Վաչագանի հարցումների պատասխանները, որոնց հեղինակներն են Մատթէ գիտնաւոր երէցը (պահպանուել է միայն «Պատմութիւն Աղուանից»-ում) եւ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսը («Պատմութիւն

Աղուանից»-ում՝ մէկ հատուած. ամբողջութեամբ պահպանուել է Հայոց կանոնագրքի ձեռագրերում⁷, ինչպէս նաեւ Աղուէնի եկեղեցական ժողովի կանոնները (պահպանուել է նաեւ Հայոց կանոնագրքի ձեռագրերում)⁸: Սրանք ինքնուրոյն գործեր են, որոնք նախորդ գլուխներից եւ իրարից տարբերուում են նաեւ լեզուաճանկան առանձնայատկութիւններով:

Նոյն պատճառով Վաչագանի մասին երկի մաս չի կարող լինել նաեւ Ներսէս Ակիմեանի մատնանշած Ա.գ գլխի գոնէ հիմնական մասը, ո՞րք պարունակում է Եղիշայ առաքեալի պատմութիւնը: Եթէ Եղիշայի անունը եւ նրա նշխարների գիւտը յայտնի լինէին «Վաչագանի վէպ»-ի հեղինակին, ապա այդ սրբի յիշատակութիւնը կ'ունենայինք նրա գոնէ այն դրուագում, որտեղ Վաչագանի հրամանով հաւաքուում են Աղուանքի տարբեր շրջաններում պահուող սուրբ նշխարները (Գրիգոր Լուսաւորչի, Զաքարիայի, Պանդալէոնի, Հռիփսիմէի եւ Գայիանէի), որպէսզի նրանց օգնութեամբ գտնեն Գրիգորիսի նշխարների թաքստեան վայրը: Իրականում առաջին հերթին հէնց «Վաչագանի վէպ»-ում յիշատակուած չլինելու պատճառով է պարզ, որ Եղիշայ առաքեալի եւ Ուռնայր թագաւորի հետ կապուող Աղուանից լուսաւորութեան պատմութիւնները ստեղծուած են Զ դարի վերջից կամ է դարի սկզբից ոչ շուտ եւ արդիւնք են այդ ժամանակ ծագած Հայոց եկեղեցու գերագահութեան կարգավիճակից («առաջինը հաւասարների մէջ») ձեռքազատուելու՝ վրաց եւ Աղուանից եկեղեցիների այնպիսի միտումների, որոնք դեռեւս չեն նկատուում «Վաչագանի վէպ»-ում⁹:

Յայտնի է, որ Վաչագան թագաւորի մասին չեն յիշատակում Ե-Զ դարերի հայ

մատենագրութեան հաւաստի աղբիւրները, փոխարէնը՝ նրա անուան հետ են կապուած «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ եւ նրանից դուրս պահպանուած կրօնաբարոյագիտական, նշխարների գիւտերի եւ այլ թեմաներով մեծ թուով գրուածքներ ու աւանդութիւններ: Իրանցից շատերի հաւաստիութեան նկատմամբ հիմնաւոր կասկածը հայր Ներսէս Ակիմեանի համար պատճառ է դարձել մերժելու հէնց թագաւորի իսկ պատմականութիւնը¹⁰: Ժամանակին մենք, թուում էր թէ, զգոյշ ենք եղել այդ հարցում՝ յատուկ նշելով, որ Վաչագանի պատմականութեան խնդիրը ճիշտ կը լինի քննարկել, անկախ հետագայ վերագրումներից ու աւանդութիւններից, այսինքն՝ միմիայն «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների հաղորդած տեղեկութիւնների շրջանակում: Սակայն նկատելով (որոշ դէպքերում՝ սխալ) հէնց այս սկզբնաղբիւրների պարունակած ինչ-ինչ հակասութիւններ՝ մենք, ի վերջոյ, երկուսն էլ համարել ենք ոչ ժամանակակից, թուազրել Զ դարի երկրորդ կէսով եւ շտապել ենք եզրակացնել, որ եթէ անգամ ընդունենք Վաչագանի պատմականութիւնը, ապա առանց լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի դժուարանալու ենք ասել, թէ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների ո՛ր տեղեկութիւններն է հնարաւոր վերագրել այդ իրական թագաւորին¹¹:

Աղուանքի Վաչագան թագաւորի պատմականութեան մերժման առանցքային փաստարկն այն էր, որ Մովսէս Դասխուրանցին իր երկի բազմաթիւ մասերում, իսկ ամէնից ուղղակի՝ Ա.ժ գլխում, նրան եւ իր տոհմի ինը նախորդ ներկայացուցիչներին (Վաչագան Քաջ, Վաչէ Քաջ, Ուռնայր, Յաւազան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսփաղէն եւ Վաչէ Բ) կապում է Հայկ նահապետից սերող Առանի

հետ եւ համարում Առանշահիկներ: Դա այն դէպքում, երբ մի կողմից, համաձայն Կորիւնի, Փաւստոս Բուզանդի, Եղիշէի եւ Մովսէս Խորենացու հաւաստի տեղեկութիւնների՝ այդ նախնիներից Ուռնայրը, Եսփաղէնը եւ Վաչէ Բ-ն հաստատապէս Բուն Աղուանքի թագաւորներ են եղել եւ Առանից սերող արցախ-ուտիքեան Ծաղէացուց, Ուտէացուց եւ Գարդմանացուց բնիկ հայկական իշխանական տոհմերի հետ կապ ունենալ չէին կարող, իսկ միւս կողմից՝ Վաչագանին իր նախորդներից բաժանել է թագաւորական իշխանութեան բացառւածութեան ոչ այնքան փոքր՝ 30-ամայ միջակայք («զերեսուն ամ ի Վաչէ ԳՎաչագան Բարեպաշտն առանց թագաւորի կացեալ աշխարհս Աղուանից» (Ա.ժգ, էջ 42.10-11)): Սրան գումարուում էր երկրորդ փաստարկը. ինչպէս նախորդ ուսումնասիրողներից շատերին, այնպէս էլ մեզ շփոթեցրել էր Կուրի աջափնեակի հայկական «Արցախ ամուր աշխարհի» եւ «Ուտիացուց (Օտէացուց) գաւառի» հետ Վաչագան թագաւորի թուացեալ ուղղակի կապուածութիւնը «Վաչագանի վէպ»-ում եւ Աղուէնի կանոններում (առաւել ճոխացուած հետագայում ի յայտ եկած գրուածքներում եւ աւանդութիւններում): Նշուածը բաւարար էր թուում ենթադրելու, որ Հայոց Արեւելից կողմանց հետագայ իշխանական տների կիսաառասպելական առհմաբանութիւնների հեղինակներն են «Վաչագանեանների» արքայացանկի մէջ միաւորել Բուն Աղուանքի թագաւորներին եւ արցախեան իշխանների նախնի Վաչագանին: Անգամ ստիպուած ենթադրել ենք, թէ «Վաչագանի վէպ»-ի երկու հատուածներում (Ա.ժգ գլխի վերջում եւ Ա.ժէ-ի միջնամասում) առկայ տեղեկութիւններն այն մասին, որ Վաչագանը «սուրբ Վաչէի» (Եղիշէ պատմիչի յիշատակած «Աղուանից թագաւորի») եղբայր

Յագկերտի որդին է, Մովսէս Դասխուրանցու ընդմիջարկութիւնն են¹²: Բնականաբար, որեւէ խօսք չէր կարող լինել նաեւ Ա.ժ գլխի երկրորդ կէսի տոհմաբանական տեղեկութիւնները «Վաչագանի վէպ»-ի հետ կապելու մասին:

Բարեբախտաբար, անցեալ տարի մեր ուշադրութիւնը լրջօրէն գրաւեց մի հակասութիւն «Պատմութիւն Աղուանից»-ի Ա եւ Բ խմբերի ձեռագրերի ընթերցումներում, որի քննութիւնը դարձաւ ժամանակին վրիպած իրական պատկերի վերահաման բանալին: Ա.ժ գլխի սկզբում, առնելով իր հիմնական աղբիւրներից մէկից՝ Մովսէս Խորենացուց՝ Դասխուրանցին թուարկում է իր երկի, այսպէս ասած, «գլխաւոր հերոսներ» Առանշահիկների նախնիներին՝ Յաբեթից ու Հայկից մինչեւ Երուանդ Սակաւակեաց եւ Տիգրան Առաջին, ապա աւելացնում այն, ինչն արդէն պնդել էր Ա.գ գլխում¹³. «Ի սոցա (bc1r սոցին) ծննդոց կարգեցաւ Եռան (bc1r զԵռան կարգեցաւ) նախագահ Աղուանից»: Իրանից յետոյ Ա եւ Բ խմբի ձեռագրերը մատուցում են իրարից սկզբունքային տարբերութիւններ պարունակող հետեւեալ տեղեկութիւնը (ստորեւ տարբերութիւններն ընդգծուած են մեր կողմից).

a ձեռագիր

«...եւ թիւ արտոցն յԱռանա մինչեւ ցՔաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ: Եւ որ ըստ կարգի կացին թագաւորք տանս Աղուանից, անուանք են այսոքիկ. Վաչագան Քաջ, Վաչէ, Ուռնայր...»:

bc1r ձեռագիր

«...եւ թիւ անուանցն չէ յայտ մինչեւ ցՎաչագանն Քաջ. եւ սոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չուսմ ասեմ: Լոկ ըստ կարգին կացին թագաւորք Աղուանից

տաւսն, որոց անուանք են այսոցիկ. Վաչագան, Վաչէ, Ուռնայր...»:

Այս բնագրերի տարբերութիւններն ակնյայտօրէն ցուցադրում են գրիչներէից մէկի լուրջ խմբագրական աշխատանքը: Յատկապէս կարեւոր է այն, որ *α* ձեռագրում Վաչագան Բաջը համարուում է «Արշակունեաց մեծ ազգի» ներկայացուցիչ, իսկ *β* խմբի ձեռագրերում պնդուում է լրիւ հակառակը, որ նոյն Վաչագան Բաջի մասին «չի կարող ասել, թէ որ տոհմից է»¹⁴: Տակաւին պարզ է, որ եթէ սկզբնօրինակայինը *β* խմբի ձեռագրերի բնագիրն է (այսինքն՝ Մովսէս Դասխուրանցին Վաչագանի տոհմը չգիտէ), ապա *α*-ի գրչին (խմբագրին) պէտք է վերագրել ինչ-որ մի հիմքով «եւ սոցայն ստոյգն... չունիմ ասել» հատուածի փոխարէն այդպիսի անյայտութիւնը ցրելու միտումով «որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց» մտքի տեղադրումը Մովսէս Դասխուրանցու տողերի մէջ: Եւ ընդհակառակը՝ եթէ ընդունենք, որ Դասխուրանցու բնօրինակում գրուած է եղել «որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց» միտքը, ապա *β* խմբի մայր ձեռագրի գրչին (խմբագրին) պէտք է վերագրել ինչ-որ մի հիմքով այդ մտքին չհամաձայնելու պատճառով նրա փոխարէն «եւ սոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ եմ, չունիմ ասել» հակադիր մտքի տեղադրումը:

Մեզ համար ակնյայտ է, որ Մովսէս Դասխուրանցու ինքնագրի փոփոխութիւնը կարող էր կատարուել միայն այս երկրորդ, այսինքն՝ *β* խմբի մայր ձեռագրի գրչի կողմից խմբագրական միջամտութեան ճանապարհով: Պատճառն այն է, որ *α* դարի պատմիչին ոչ մի կերպ հնարաւոր չէ վերագրել Վաչագան Բաջի տոհմի ակունքը չիմանալու խոստովանութիւնը: «Պատմութիւն Աղուանից»-ի բազմաթիւ մասերում Մովսէս Դասխուրանցին առանց կասկածի նշոյլի պնդում

է, որ Վաչագան Բարեպաշտն ու իր նախնիները Առանշահիկներ են՝ սերուած Յաբեթից, Հայկից եւ Առանից: Աւելին՝ դանրա երկի ինչ-որ իմաստով գլխաւոր միտքն է, որը կարծիք թելի պէս անցնում է աշխատութեան սկզբից մինչեւ վերջ (գլուխներ Ա.դ, Ա.ժե, Բ.ժէ, Գ.իբ): Այն մատնանշում է «Պատմութիւն Աղուանից»-ի ինչ-որ իմաստով «գլխաւոր հերոս»՝ *α* դարի երկրորդ կէսում արքայական թագ ստացած, Փառխոսի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս-Սենեքերիմի տոհմաբանութեան արմատներից մէկը, ինչպէս որ յատուկ շեշտուած է երկի ամփոփիչ Գ.իբ գլխի սկզբում. «Ստուգաբանութեամբ այսպէս ծանեաք. ընդ Հայկազնեաց արանց խնամաւորիլ Միհրական տոհմին, եւ պատուաստութեամբն այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն Արեւելեաց կողմանց Աղուանից»¹⁵: Նշանակում է, իր՝ Մովսէս Դասխուրանցու գրչի տակից չէր կարող դուրս գալ «եւ սոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել» արտայայտութիւնը:

Տեղին աւելացնենք, որ այդ արտայայտութիւնը իր ոճով էլ տարբերուում է Մովսէս Դասխուրանցու յաճախակի ընդմիջարկութիւններից (չնայած նմանեցման փորձին): Պատմիչը նմանատիպ ենթատեքստերում, առանց բացառութեան, հանդէս է գալիս առաջին դէմքի յոգնակիով կամ երրորդ դէմքի չէզոք շարահիւսութեամբ: Օրինակ՝ «... զի յսկզբան... չունիմք ինչ ասել զստոյգն ի պէտս լսողաց» (Ա.դ, էջ 4, տող 3-5); «Առաւել քան զնախագահելն Առանայ ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ոչ գտաք մինչեւ...» (Ա.գ, էջ 9.15-16); «Ըստ կարգի զրոյցք յԱռանայ մինչեւ ցՈւռնայր... ոչ գտաք՝ այլ հարեւանցի գրեցաւ, որ ինչ ի պէտս էր...» (Ա.ը, էջ 12.9-11); «յոյժ ցանկալի էր ըստ կարգաց գտանել (*α* գի-

տել) զպատմածս...: Սակայն յայսմ վայրի նպաստաւորէ մեզ Քերթողահայրն...» (Ա.ը, էջ 12.12-15); «Գտանին զրոյցք Արեւելեաց կողմանց, ...զոր պատշաճ վարկաք մակագրել ի տառս տաղաչափութեան մերում» (Բ.ա, էջ 106.6-8); «Ի ստոյգ եւ ի բուն աւրինակս պատմագրաց այսպէս ծանեաք...» (Բ.ժէ, էջ 172.16); «զճմարտախաւս դրուագս բայից սակաւինչ նուազ գոյի (=գտանի - Ա. Յ.) զմիայնանալոյն Իսրայէլի... այլ զայս եւ եթ... բովանդակեցաք» (Բ.իթ, էջ 201.20-21, 202.1); «Սակա հայրապետական անուանց պարտ եւ պատշաճ վարկանելի էր զստոյգն յիշատակաւ դրոշմել ի գրի: Բայց... տեղիք կալոյ նոցա: անյայտք մեզ..., այլ զայս փոքր ի շատէ արտայայտեալ բացայայտեցաք առ ի գիտութիւն...» (Գ.իգ, էջ 341.21, 342.1-5): Իսկ եզակի առաջին դէմքով արտայայտութիւններ «Պատմութիւն Աղուանից»-ում կան (եւ դա նոյնպէս կարեւոր է *β* խմբի մայր ձեռագրի յաւելման ոճը հասկանալու համար, ճիշտ այնպէս, ինչպէս՝ ստոյգ, չունիմ (չունիմք) բառերի օգտագործումը), սակայն միայն բառացի արտագրուած աղբիւրների հատուածներում: Օրինակ՝ 630-632 թթ. միջեւ գրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» երկում ունենք՝ «Ո՛վ սքանչելի պատմութեանս, որ հանդերձեալ եմ հնչեցուցանել...» (Բ.թ, էջ 127.4); «Բայց անսացէք ինձ սակաւիկ մի, եւ պատմեցից կարճառաւտի...» (Բ.ժգ, էջ 146.7)¹⁶:

Այսպիսով, «եւ սոցայն ստոյգն... չունիմ ասել» արտայայտութիւնը պատկանում է *β* խմբի մայր ձեռագրի գրչին, որը, փաստօրէն, խմբագրի դեր է ստանձնել: Նա նկատել է, թէ ինչպէս է «Պատմութիւն Աղուանից»-ի բովանդակութեանը հակասում «որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց» միտքը, եւ, ըստ երեւոյթին,

չկողմնորոշուելով, թէ ումից է գալիս այդ «սխալը»՝ Դասխուրանցուց, թէ մի որեւէ գրչից, թոյլ է տուել իրեն դրա փոխարէն գոնէ շփոթուած վերապահում անելու. «եւ սոցայն ստոյգն... չունիմ ասել»: Իհարկէ, եթէ շփոթուածութիւնը չլինէր, ապա նա կարող էր այդ յաւելումն էլ չանել, որպէսզի բնագրում մնար «Վաչագան Բաջը սերում է Առանից» պարզ միտքը:

Միւս կողմից՝ որքան էլ որ Վաչագան Բաջի՝ Առանից սերուած լինելու մասին մտքին հակասի «որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց» արտայայտութիւնը, այնուամենայնիւ պէտք է ընդունենք, որ այն եղել է «Պատմութիւն Աղուանից»-ի սկզբնագրում: Իսկ դա կարող էր լինել միայն մէկ դէպքում, այն է՝ եթէ Մովսէս Դասխուրանցին ինչ-որ մի սկզբնաղբիւրի հատուած բառացի արտագրելիս որոշակի անուշադրութեան հետեւանքով մեխանիկորէն ընդօրինակէր այդ արտայայտութիւնը: Այսինքն՝ Վաչագան Բաջի՝ Արշակունի լինելու միտքը յանգում է *α* դարից աւելի հիմ, գրաւոր եւ «Պատմութիւն Աղուանից»-ում գոնէ ինչ-ինչ հատուածներով բառացի արտագրուած աղբիւրի (ընդ որում պատմիչը բարեբախտաբար ուշադիր չի եղել արտագրութեան ժամանակ, հակառակ դէպքում այդ միտքը պարզապէս կը ջնջուէր. մասնագէտներին լաւ յայտնի է, որ մեր պատմիչը չի պատկանում Հայոց միջնադարի այն մատենագիրների թուին, որոնք համեմատաբար խնամքով էին վերաբերում ձեռքի տակ եղած նիւթերին. այն դէպքերում, երբ սկզբնաղբիւրի տեղեկութիւնները չէին համապատասխանում նրա պատկերացումներին ու մտադրութիւններին, Մովսէս Դասխուրանցին չի խուսափել դրանք բաց թողնել կամ շարագրել խեղաթիւրուած ձեւով¹⁷): Արդ, ո՞րը կա-

միջի ուշադրութիւնը, այլապէս ջնջուած կը լինէր նրա կողմից: Բոլոր դէպքերում ճիշտ է մտածել, որ վէպի տոհմաբանական հատուածում Վաչագան Քաջի մասին ասուած է եղել ոչ միայն վերջին նախադասութիւնը, այլև Աղուանքին «միանգամայն տիրելու» մասին միտքը, որը ժ դարի պատմիչը այնտեղից հաւանաբար տեղափոխել է մի քանի գլուխ առաջ (ճիշտ այնպէս, ինչպէս, հաւանաբար, Ուռնայրի՝ Շապուհի քեռայրը լինելու մասին տեղեկութիւնը տեղադրուել է Ա.թ գլխի շարադրանքում):

«Վաչագանի վէպից» որոշ արտայայտութիւններ Մովսէս Դասխուրանցու կողմից իր երկի այլ գլուխներ տեղափոխելու դէպքերի քննութեան առնչութեամբ մեր ուշադրութիւնը գրաւեց նաև Ա.գ գլխի երկրորդ պարբերութիւնը Թադէոս առաքեալի մասին: Ժամանակին Ներսէս Ակինեանը ենթադրել է, որ այդ գլխի սկիզբը վերաբերում է Վաչագան արքայի մասին պատմող երկին (=«Վաչագանի վէպին»)՝³⁹: Մենք անուշադրութեան էինք մատնել այդ ենթադրութիւնը՝ համարելով, որ Թադէոսի մասին պատմող հատուածը պարզապէս գլխի շարունակութեան մէջ բերուած Եղիշայ առաքեալի առասպելի այն շարադրանքի բնականոն սկիզբն է, որն ստեղծուել է է դարից ոչ վաղ: Սակայն այժմ ուշադրութիւն գրաւեց այն հանգամանքը, որ ի տարբերութիւն գլխի երկրորդ մասի՝ Թադէոսի հատուածի բնագիրը շեղուած է Մովսէս Դասխուրանցու շարադրանքի ոճից եւ զարմանալի նմանութիւններ ցուցաբերում Փաւստոս Բուզանդի ոճին: Ժամանակին Ա.ժ գլխի համեմատական քննութեամբ ցոյց ենք տուել, որ Փաւստոսի տեղեկութիւններին հնարաւոր է յանգեցնել այդ գլխի ոչ միայն վերջին մասերը (Վրթանէսի, Յուսիկի եւ Գրիգորի սի մասին պատմութիւններով), այլև առաջին կէսը, ուր տրուում է Գրիգոր Լուսաւորչի պատմութեան համառօտ շարադրանքը: Վերջինս ոճական նոյնութիւն ունի գլխի երկրորդ կէսի շարադրանքի հետ եւ միաժամանակ ուշադրաւ մանրամասնելով որոշակիօրէն տարբերուած է Ագաթանգեղոսի պատմութեան՝ մեզ յայտնի բոլոր տարբերակներից: Դանշանակուծ է, որ եթէ ընդունենք Փաւստոս Բուզանդի երկի առաջին երկու դպրութիւնների գոյութեան հնարաւորութիւնը, ապա հիմքեր ունենք պնդելու նաև նրանցում Գրիգոր Լուսաւորչի պատմութեան մի այնպիսի տարբերակի առկայութեան մասին, որի համառօտ շարադրանքը պահպանուել է «Վաչագանի վէպի» (=«Պատմութիւն Աղուանից»-ի) մէջ⁴⁰: Փաւստոսի առաջին դպրութիւնների գոյութիւնը ենթադրող գիտնականները համարում են, որ նրանցում, բացի Գրիգորի պատմութիւնից, պէտք է լինէր նաև Թադէոս առաքեալի պատմութիւնը: Այդ մասին պատմիչն էլ ուղղակի նշում է պահպանուած առաջին (=Գ) դպրութեան սկզբում. «Ի քարոզութենէն Թադէոսի Առաքելոյ եւ նորուն յելից եւ ի մարտիրոսութենէն... եւ յառաքելասպան Սանատրկոյ արքայէն... ի ձեռն այլոցն գրեցան: Բայց եւ մեք ի մերում աստ եղաք փոքր ի շատէ ի կարգս պատմութեանս...»⁴¹: «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.ժ գլխի սկզբում Թադէոսի մասին գրուած է միայն կէս նախադասութիւն («Արդ՝ մի ոմն յաշակերտացն Տեառն՝ Թադէոս անուն, որպէս յառաջագոյն ասացաք, հասեալ սմա մասն ինչ ի Հայաստան աշխարհին, լուսաւորէր զկողմանս ինչ Արեւելեաց աշխարհին, մինչեւ եկն հոչակելին պատկազմողն եւ երիցս երանելին Գրիգորիոս...»), որը, փաստօրէն, բացի առաքեալի անունից, այլ տեղե-

կատուութիւն չի պարունակում, սակայն փոխարէնը յղում է Ա.գ գլխի բնագրին: Իսկ այնտեղ արդէն Թադէոսի մասին տրուած են մի քանի մտքեր, որոնք համեմատութիւններ կատարելու հնարաւորութիւն են տալիս: Այդպիսի համեմատութիւնը Փաւստոս Բուզանդի ինչ-ինչ դրուագների հետ ուշադրաւ եզրակացութիւնների հնարաւորութիւն է ստեղծում.

«Պատմութիւն Աղուանից», էջ 9-10

«Իսկ ի հասանել ժամանակի երեւման արեգականն արդարութեան եւ յայց ելանել փրկութեան մերոյ, անքնին էութիւն, լոյս փառաց եւ էութեանն հար ծագումն՝ զտնաւրինականն կատարեալ զամենիցս, ամենայն եւ էականն (ա էութիւնն) նստաւ փառս, ուստի ոչ էր մեկնեալ: Եւ զսուրբ եւ զցանկալի աշակերտսն իւր առաքեաց քարոզս տիեզերաց, որում (bclr որոյ) եւ մերոցս (bclr ի մերոցս) արեւելեացս վիճակեցաւ սուրբ առաքեալն Թադէոս: Սա եկեալ ի Հայք՝ յԱրտագ գաւառ (bcr գաւառի), անդ առնու վախճան մարտիրոսութեան ի Սանատրկոյ արքայէն Հայոց»:

Փաւստոս Բուզանդ, Դ.ե

«Իսկ յորս արեգակն արդարութեան զլուսաւորութիւն հաւատոցն ծագէ... (էջ 93):

Իսկ Տէր եկն յայց ելեալ կորստականին, ծնաւ ի կուսէն ի մարդկան կերպարանս... (էջ 92):

Եթէ հաւատասցես՝ եթէ Տէր Յիսուս Քրիստոս... ինքն յինքնութենէ եւ իսկ յիսկութենէ, ... ծագումն Հայր, լոյս փառաց էականն, եւ նկարագրի էութեան նորա... (էջ 90):

... յոր ամենայն ազգ եւ ազինք խոստովանին զՏէր Յիսուս Քրիստոս՝ Դնեալ ի Հաւրէ... բնակից ծնաւորն իւրում. ծագումն, լոյս փառաց Հայր, կեպարա-

նակից իւրոյ ծնաւորն (էջ 94)»:

Փաւստոսի բնորոշ ոճն այստեղ աչքի է զարնում յատկապէս ուրիշ հեղինակների նմանատիպ ենթատեքստերի հետ համեմատութեան մէջ, որը մենք կատարել ենք՝ օգտուելով Նոր Հայկագեան բառգրքի մատուցած նիւթից: Օրինակ՝ յայց ելանել արտայայտութեան նման ունենք ամենամօտը՝ «որովք այց արասցէ մեզ արեգակն ի բարձանց» (Գրիգոր Նարեկացի) կամ «Յայց ել եւ ծանեաց Աստուած զիւրսն» (Ագաթանգեղոս): Յարմար ենթատեքստեր չենք գտնում նաև երեսումն արեգական արդարութեան եւ Էութեանն հար ծագումն, թուում է թէ, անչափ ծանօթ արտայայտութիւնների համար. օրինակ՝ էականն լոյս կամ արեգակն արդար նարեկացու մօտ եւ այլն: Աւելացնենք, որ նմանութիւններն ամէնից շատ հանդիպում են Ներսէս Մեծ կաթողիկոսի մասին պատմող հատուածներում, որոնց շարադրանքին ընդհանրապէս շատ նման է «Վաչագանի վէպի» շարադրանքի ոճը⁴²:

Աւարտելով այս խնդրի քննութիւնը՝ նշենք, որ, ըստ Ներսէս Ակինեանի վերը նշուած ենթադրութեան, «Վաչագանի վէպից» է քաղուած նաև «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.ե գլխի շարադրանքը («Ցուցումն բերմանց եւ պարարտութեանց սահմանացն Աղուանից, թէ զինչ ունի ի պէտս մարդկան»): Սակայն մեր ջանքերը որեւէ կերպ փաստարկելու կամ վերջնականապէս հերքելու այդ ոչ այնքան հաւանական պնդումը յաջողութիւն չեն ունեցել:

* * *

Վերը կատարուած ժամանակագրական ճշգրտումների համաձայն՝ Դ դարի առաջին երկու տասնամեակներում, երբ Աղուանքում քրիստոնէութիւն է տարածուել, երկրի թագաւորը ամենայն հաւան-

նականութեամբ եղել է Վաչագան Գաղթ: Միաժամանակ նշուեց, որ ուշ պատմական ակնհայտ թափափուկ է հետ (մօտաւորապէս 338-373 թթ.): Աղբիւրագիտական նիւթի պակասի հետեւանքով հնարաւոր է միայն ենթադրութիւններ անել այդ առասպելի առաջացման հանգամանքների մասին: Տրամաբանօրէն հասկանալի է, որ Ուռնայրի առասպելն առաջացել է մի այնպիսի ժամանակ, երբ անհրաժեշտութիւն է գագացուել Աղուանքի քրիստոնէացման մասին հաւաստի տեղեկութիւնների կորստի պայմաններում բանաձեւել երկրի լուսաւորութեան հանգամանքները առաքելական կամ (եւ) լուսաւորչական ժամանակներում: Ամէն մի եկեղեցու համար անխուսափելի նմանատիպ ծրագրային բանաձեւումները ենթադրել են որոշակի մանրամասների արձանագրում, որոնց թւում կարելոր են լուսաւորիչ արքայի (կամ այլ աշխարհիկ իշխանաւորի) եւ առաջին հովուապետի (առաքեալի կամ կաթողիկոսի) անունները: Այդպիսիք եթէ աղբիւրներում կամ պատմական յիշողութեան մէջ չեն պահպանուել, ուրեմն պէտք է յօրինուէին առկայ հնարաւորութիւնների սահմաններում⁴³: Մեր ենթադրութեամբ, է դարի սկզբներին Աղուանից եկեղեցու շրջանակում հէնց այսպիսի մեխանիզմով են ստեղծուել Թադէոսի աշակերտ Եղիշայ առաքեալի եւ Ուռնայր թագաւորի «ծրագրային» առասպելները:

Նշենք, որ իր հիմնական միտումով Ուռնայրի առասպելը, գոնէ սկզբնապէս, չէր տարբերուում Աղուանքի քրիստոնէացման իրական պատկերից: Այն շեշտում է, որ երկիրը լուսաւորուել է շնորհիւ Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կատարած հրաշագործութիւնների («Առ-

նու եւ գվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց Լուսաւորչէ եւ գայ լուսազգեստեալ ի հոգւոյն սրբոյ, առաւել լուսաւորէ զԱղուանս... սակս մեծասքանչ զաւրութեանն, որ կատարեցաւ ի Հայք (ի ի Հայս)»⁴⁴): Թագաւորի մահից յետոյ խնդրել են իբրեւ Աղուանքի առաջին կաթողիկոս Լուսաւորչի թոռանը՝ պատանի Գրիգորիսին. «Իսկ զկնի մահուանն սորա (sic! = 373 թ. - Ա. Յ.) խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց» (Ա.թ, էջ 14.19-20 - 15.1): Որոշ գծերով այս կոնցեպցիան նմանուում է Մովսէս Խորենացու մօտ պահպանուած Վրաց աշխարհի լուսաւորութեան պատմութեանը Նունէ միանձնուհու եւ Միհրան թագաւորի ջանքերով: Օրինակ՝ «Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, ... իսկոյն եհաս առ նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն եւ ի նախարարսն, եւ զընկերացն երանելոյն Նունեայ»⁴⁵: Այս ենթադրութեան շրջանակում հնարաւոր է մտովի վերականգնել է դարի առաջին տարիների այն իրավիճակը, երբ Հայոց կաթողիկոսութիւնը իրենից անկախացման ուղին որդեգրած Վրաց կիւրիոն կաթողիկոսին համոզում էր պահպանել ակնհայտ կարգավիճակը, ի թիւս այլ պատճառաբանութիւնների յղումներ էր կատարում պատմական փաստարկումներին եւ պարբերաբար զուգահեռ բերում Աղուանից կաթողիկոսութեան ենթակայութեան հանգամանքը: Մեր կարծիքով, հէնց այս ժամանակաշրջանում պէտք է փորձեր լինէին պատմական ճշգրտումներ կատարելու ոչ միայն Վրաց, այլեւ Աղուանից երկրի լուսաւորութեան հանգամանքների վերաբերեալ, որի արդիւնքում էլ, ամենայն հաւանականութեամբ, առաջացել է Ուռնայր յայտնի թագաւորի կողմից Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Աղուանքը

քրիստոնէացնելու մասին պատմութիւնը: Իհարկէ, Մովսէս Դասխուրանցու երկում արձանագրուած վիճակով Ուռնայրի առասպելն արդէն «զարդարուած է» որոշ տարրերով, որոնցով այն «հարստացուել է» աւելի ուշ կամ հէնց (նաեւ) Ժ դարի պատմիչի գրչի տակ, եւ որոնք պէտք է այդ առասպելը ծառայեցնէին. Աղուանից եկեղեցու բացարձակ ինքնազիտութեան միտումներին: Օրինակ՝ «եւ այսք ի միոմ ժամանակի եղեն հրաշք յաստուածուստ», կամ՝ «ոչ թէ ի հարկէ ինչ կամ թէ աւագ գոլ զՀայս քան զԱղուանս հաշուեցան, այլ սակս մեծասքանչ զաւրութեանն, որ կատարեցաւ ի Հայս, եղեւ սոցա կամաւ հնազանդիլ (ի հնազանդել) արժանաժանազ գարմին սրբոյն Գրիգորի. կոչեցին եւ հաճեցան»⁴⁶:

Տեղին նշենք, որ հաւանաբար նոյն խմբումների ժամանակաշրջանում (է դարի սկիզբը) կարող էր առաջացած լինել նաեւ Եղիշայ առաքեալի առասպելը, սակայն արդէն՝ իբրեւ արդիւնք Աղուանից եկեղեցու որոշ շրջանակների ինքնազիտութեան միտումների: Շատ նման Վրաց կիւրիոն կաթողիկոսի պատմական փաստարկումներին՝ այն փորձում է ապացուցել Աղուանից լուսաւորութեան ճանացել պարհը ուղիղ Երուսաղէմից, փոխանակ Հայաստանի: Օրինակ, չնայած Եղիշայ «հայոց» առաքեալ Թադէոսի աշակերտն է, սակայն վերջինիս նահատակութիւնից է յետոյ նա վերադառնում է Երուսաղէմ եւ այստեղ վերածուում «աղուանից» առաքեալի. «... ձեռնադրի Եղիշայ (bcir եղիշէ) ի ձեռաց սրբոյն Յակոբայ (a Յակովզէ)՝ եղբաւրն Տեառն, որ էր առաջին հայրապետ Երուսաղէմի: Եւ վիճակ առեալ իւր զարեւելս՝ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ Պարսս (bcir ի Պարսս)՝ մտանէ ի Մագբուլթս (br Մագբուլթս), յոյս տուեալ ի Հայաստանացն» (գլուխ

Ա.գ, էջ 10.9-12): Որեւէ հիմք չկայ նման միտումը աւելի ուշ դարաշրջանի, մասնաւորապէս՝ Մովսէս Դասխուրանցուն վերագրելու, քանի որ 684 թ. գրուած մի պատմական երկ (մեր կողմից պայմանականօրէն կոչուած հէնց «684 թ. պատմութիւն») պարունակում է Մաշտոցի եւ նրա աշակերտների առասպելը, որը նոյնպէս Աղուանքի լուսաւորութիւնը կապում է Երուսաղէմի հետ («եկայք, եղպարք, յաստուածայինն երթիցուք ի քաղաքն Երուսաղէմ եւ ի նոցանէն (bcir նոցունց) խնդրեսցուք մեզ առաջնորդս, զի բնական լուսաւորութիւն (bcir լուսաւորութեանն) երկրիս Արեւելեացս ի ձեռն սրբոյն Եղիշայի յԵրուսաղէմէ եղեալ սկիզբն»⁴⁷:

Ուռնայրի մասին տեղեկութիւնները շարադրուած են ոչ միայն Մովսէս Դասխուրանցու գրչին պատկանող Ա.թ գլխում կամ յաջորդող գլուխների առանձին արտայայտութիւններում⁴⁸, այլեւ բաւական մանրամասն Ա.Ժ գլխի սկզբում, որը Ժ դարի հեղինակի կողմից բառացի արտագրուած մի հին երկ է՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ» վերտառութեամբ⁴⁹: Այս թուղթն ամբողջապէս ջատագովական է. հեղինամբար մանրամասն եւ գեղարուեստակալ շատ մանրամասն եւ գեղարուեստական բարձր ոճով գովաբանում է յանուն քրիստոնէական հաւատքի Սասանեաններէ դէմ ապստամբած Աղուանից Վաչէրի դէմ ապստամբած Աղուանից Վաչէրում նրան հաւատարիմ մնալ իր զոհողական պահանջները: Ընդ որում որեւէ տեղեկութիւն ապստամբութեան կամ նրա արտագրութեան մասին Գիւտը չի առանձին դրուագների մասին Գիւտը չի յայտնում, այդ պատճառով 459-461 թթ. աղուանական ապստամբութեան միակ սկզբնաղբիւրը մնում է Եղիշէի պատմութեան համապատասխան դրուագը⁵⁰: Տեղին նշենք, որ վերջինս էլ, բաւական

մանրամասն շարադրելով Աղուանից թագաւորի ապստամբութեան պատմութիւնը, չի տալիս թագաւորի անունը: Մովսէս Դասխուրանցին բառացիօրէն ընդօրինակել է Եղիշէի այդ հատուածը «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.Ժ գլխում՝ իր սկզբնաղբիւրի մասին յղում չտալով եւ աւելացնելով թագաւորի անունը՝ «Վաչէ»: Հասկանալի է, որ այդ անունը նա գիտէր շնորհիւ «Վաչագանի վէպի» տոհմաբանական հատուածի եւ Գիւտ Արահեզացու «Թղթի»:

Այնուամենայնիւ՝ Թղթի լեզուաոճական առանձնայատկութիւնների քննութիւնը թոյլ է տալիս չհասկածել, որ այն իրօք է դարի երկրորդ կէսի երկ է (բաւական զուգորդուած Եղիշէի պատմութեան լեզուին ու ոճին): Կասկած է յարուցում միմիայն նրա սկզբում Ուռնայր թագաւորի անունան յիշատակութիւնը՝ իբրեւ Աղուանքը քրիստոնէութեան բերած արքայի: Եթէ մի պահ ընդունենք, որ Ուռնայրի «սրբացումը» կատարուել է Վաչէի ապստամբութեան ժամանակներում կամ դրանից առաջ եւ արտացոլուել Գիւտ Արահեզացի կաթողիկոսի (461-478 թթ.) կամ նրա որեւէ ժամանակակցի երկում, ապա ստիպուած պէտք է լինենք համարել՝ ա) որ Աղուանքը դարձի բերած իրական թագաւորի անունը է դարի երկրորդ կէսում արդէն մոռացուել էր; բ) բայց նոյն ժամանակ անհրաժեշտութիւն էր առաջացել բանաձեւելու Աղուանից դարձի պատմութիւնը անգամ թագաւորի անունը յօրինելու պայմանով; գ) եւ այդ ժամանակից քիչ անց Ուռնայրի՝ իբրեւ Աղուանից լուսաւորիչ թագաւորի պատմութիւնը ինչ-ինչ պատճառներով վրիպել էր «Վաչագանի վէպի» հեղինակի ուշադրութիւնից: Այսպիսի լուծումները հաւանական համարուել չեն կարող:

Սակայն Վաչէին ուղղուած Թղթում

բերուած Աղուանից դարձի պատմութեան մանրամասների քննութիւնը մեզ յուշում է այլ հաւանական լուծում (թէկուզ եւ նոր ենթադրութիւնների վրայ հիմնուած): Բանն այն է, որ Գիւտի կողմից արտացոլուած Աղուանքի քրիստոնէացման պատմութիւնը իր գլխաւոր գծերով զարմանալիօրէն համընկնում է Աղուանից դարձի իրական պատմութեանը, որը բարեխտաբար շարադրուել է Ագաթանգեղոսի երկի վաղագոյն տարբերակում՝ «Գրիգորի վարք» անունը կրող սկզբնաղբիւրում: Վերջինս մեզ հասել է միայն յունարէն եւ ասորերէն ու նրանցից կատարուած արաբերէն եւ քարշունի թարգմանութիւններով⁵¹: Ուսումնասիրողների կարծիքով, յունարէն թարգմանութեան համար հիմք ծառայած հայերէն բնագիրը շարադրուել է Ե դարի առաջին կէսում՝ հիմնուած Դ դարում յունարէն գրուած մի երկի վրայ (պայմանականօրէն կոչուած «Գիրք Գրիգորիսի»⁵²), որը որոշ առասպելական տարրերի կողքին բաւականին մեծ հաւաստիութեամբ ամփոփել է Գրիգոր Լուսաւորչի կողմից Հայաստանի լուսաւորութեան իրական դրուագներն ու հանգամանքները: «Գրիգորի վարքը» յայտնում է, որ, վճռելով ընդունել Վիրապից դուրս հանուած Գրիգորի քարոզած քրիստոնէական հաւատքը, Հայոց Տրդատ թագաւորն իր մօտ է հրաւիրել իր կրտսեր դաշնակից ու բարեկամ Վրաց, Աղուանից եւ Լազերի թագաւորներին: Նրանք ժամանել են Հայաստան, հայ իշխանների հետ միասին Գրիգորին ուղեկցել Կեսարիա ձեռնադրուելու համար եւ, վերադառնալով Հռոմէացիների երկրից, 30 օր պահքից յետոյ 370000 հայերի հետ միասին մկրտուել են Լուսաւորչի ձեռքով Արածանի գետում⁵³: Դրանից յետոյ Գրիգորը Հայաստանի տարբեր գաւառներ եւ նշուած երկրներ է ուղարկել երէցների ու

եպիսկոպոսների: Նրանց թուում Լուսաւորչին Աղուանք է ուղարկել «բարեպաշտ այր Թովմային (Θωμᾶν)՝ Սատալա փոքր քաղաքից»⁵³: Ժամանակին նշել ենք, որ եթէ Կեսարիայում Գրիգոր Լուսաւորչի՝ քահանայապետ ձեռնադրուելը այս տեղեկութիւնների հիման վրայ թուագրուում է 314 թ. աշնանով⁵⁴, ապա Աղուանից դարձը ճիշտ կը լինի թուագրել 315 թուականով (Աղուանից թագաւորի մկրտուելը Արածանիում, թովմա եպիսկոպոսի հետ Աղուանք վերադառնալը եւ երկիրը լուսաւորելը):

Արդ, Գիւտի Թղթում ասուում է, որ Աղուանից թագաւորը իր նախարարների ու զօրքի հետ միասին եկել է Հայաստան՝ Տրդատ արքայի մօտ, եւ քառասունութայ պահքից յետոյ մկրտուել ջրում Գրիգոր Լուսաւորչի կողմից («... էջ թագաւորն յամենասուրբ ջուրն եւ ամենայն զաւրբն ընդ նմա»), որից յետոյ շարունակուում է. «ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռոմ վաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային: Այսու երկնաւոր բարեաւք եկն Ուռնայր արքայի եմուտ յաշխարհդ Աղուանից, ուսոյց եւ կատարեաց զնոսա առաքելական կանոնաւք»⁵⁵: Համապատասխանութիւններն անկնյայտ են, բայց Ուռնայրի անունան յիշատակութիւնը՝ հէնց այդ պատճառով աւելի քան հակասական:

Տուեալ հակասութիւնը ժամանակին պատճառ է եղել Ներսէս Ակիմեանի եւ մեզ համար անհաւաստի համարելու ամբողջ Գիւտի Թուղթը՝ իբրեւ է կամ Ը բողջ Գիւտի Թուղթը՝ իբրեւ է կամ Ը դարերում ստեղծուած⁵⁶: Սակայն ներկա յուժս մենք աւելի հաւանական ենք համարում ենթադրել, որ անհաւաստի է ոչ թէ ինքնին Թուղթը (ինչպէս նշեցինք լեզուաբանական առանձնայատկութիւններով այն Ե դարի երկրորդ կէսի երկ է), այլ

միայն նրանում Աղուանից թագաւորի «Ուռնայր» անունան օգտագործումը (3 անգամ): Հաւանաբար պէտք է մտածել, որ է դարից յետոյ, երբ Աղուանից դարձն արդէն «պաշտօնապէս» կապուել էր Մովսէս Խորենացու մօտ Դ դարի համար յիշատակուած միակ Աղուանից թագաւորի՝ Ուռնայրի հետ, վերջինիս սրբացուած անունը ինչ-որ մի ուսեալ գրչի կողմից մտցուել է Գիւտի Թղթի բնագիր: Դա կատարուել է կա՛մ իրական թագաւորի առկայ անունան փոխարէն, կա՛մ այդպիսի անունան բացակայութեան պարագայում: Այս վերջին հարցը դժուար է լուծել անգամ ենթադրութիւնների մակարդակով. պարզ է միայն այն, որ եթէ Թղթի բնագրում եղած լինէր Աղուանից լուսաւորիչ արքայի անունը, ապա դա պէտք է լինէր Վաչագան Քաջը, ինչպէս որ երեւում է «Վաչագանի վէպի» տոհմաբանական տեղեկութիւնները ժամանակագրորէն դասաւորելու արդիւնքում:

«Վաչագանի վէպի» վերջին հատուածներից մէկի ուշադիր քննութիւնը թոյլ է տալիս ենթադրութեան մակարդակով առաջ քաշել այն թեզը, որ Աղուանից իրական լուսաւորիչ Վաչագան Քաջն այդտեղ հաւանաբար յիշատակուած է եղել: Ա.Ի. գլխի վերջնամասում հեղինակը պատմում է, որ Ամարասում մեծ դժուարութիւնների գնով յայտնաբերուած Գրիգորիսի նշխարները մասամբ թողնում են տեղում, մասամբ յանձնում արքայական բանակին (դրա մէջ հասկացում է ոչ միայն զօրքը, այլեւ հոգեւորականների եւ արքունական ծառայողների՝ Ամարասում հաւաքուած բաւարարների՝ Ամարասում հաւաքուած բանակը), որն սկսում է իր վերադարձի երկանակը, որն սկսում է իր վերադարձի երկանակը (Քարուէճ ամառանոցով եւ Ուտիացոց-Օտեացոց գաւառի դաշտավայրով): Այս նկարագրութեան մէջ անս-

պատկերներն են ենթատեքստից դուրս (ենթատեքստային նախադասութիւնների մէջ մէկընդմէջ) յայտնուում են երկու նախադասութիւն լուսաւորիչ արքայ Վաչագանի գնահատականի եւ նրա նախնիների մասին (ստորեւ այդ նախադասութիւններն ընդգծում ենք)։ «Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն եւ սրբոցն դասիւք (bclr դասուք)։ Անդանաւր բարեացապարտն Վաչագան արքայ զհոգեւորական եւ (a զհոգեւորականսն, չիք եւ) զգերաշխարհիկն զայն աւար առեալ, որ էր անանց եւ անպատմելի բարեացն առիթ անա (a չիք նմա), զոր անա եղելոց (a եղելոցն) թագաւորացն անա քան զնա իր իսկ անանեացն ոչ ոմեք համբարեցաւ (bclrz ամբարեցաւ) այսպիսի մեծաւքանչ պարգեւք։ Եւ քրիստոսածողով բանակին աւարամասն առեալ՝ զողորմութեանցն Աստուծոյ զբերումն անճառաբար ստանային ի ձեռն⁵⁷ քրիստոսագոյնտ արքային Վաչագանայ, զորոյ գովութիւնն ոչ ինչ անուագ գով վարկանիմ, քան զարեւտականին տիրող Կոստանդիանոսի կայսեր (a Կոստանտինոս կայսր) կամ զԱրշակունիին Տրդատիոս՝ Մեծաց Հայոց փրկութեան գտող։ Որ եւ մեզս (bclr մերոյ շ մերս)՝ արեւելեացս, սա եղեւ դուռն լուսոյ աստուածափրկութեան եւ բազմազան բարեաց արիւնակ երջանիկն այն (a երջանիկս այս)։ Սա մեծապէս ելեալ ի Հանդէսս յայս՝ դառնայ, ըստ որում զգալն էր պատրաստեալ՝ նոյնգունակ եւ առաւելագոյն եւս Հայեցուցնող (bclr Հիացուցանող) պայծառութեամբ զճանապարհն յաւրինեալ (a յաւրինեաց)» (էջ 83.9-22)։

Եթէ այսպիսի «խառնուածութիւնն» ընդունենք իբրեւ երկու տարբեր սիւժէների (բանակի երթի եւ մասունքների յայտնաբերման շնորհին արժանացած Վաչագան Բարեպաշտի գովաբանութեան) մէկընդմիջուած շարադրանք, ինչ-

պէս որ իր բնագիրը Հասկացել է Մովսէս Դասխուրանցին (կամ անգամ նախորդ գրիչներից մէկը), ապա միեւնոյնն է, անսպասելի պէտք է համարել երկրորդ ընդգծուած Հատուածում Վաչագանի համեմատութիւնը շուրջ երկու դար առաջ ապրած եւ իրենց երկրները առաջին անգամ դարձի բերած Կոստանդիանոսի եւ Տրդատի Հետ։ Եթէ սա լինէր մի ինչ-որ ընդհանուր գնահատականների հատուածում, ապա դա կարելի էր հասկանալ իբրեւ պարզ գովաբանական զեղում։ Սակայն քիչ վերելում թագաւորի նախնիների յիշատակումը (առաջին ընդգծուած հատուածում) եւ դրանից յետոյ նորից քրիստոսածողով բանակի մասին խօսելը թոյլ է տալիս նաեւ մտածել, որ բանակի մասին այս վերջին արտայայտութիւնն ուղղակի իր տեղում է։ Այսինքն՝ մենք ենթադրում ենք, որ դրա փոխարէն «Վաչագանի վէպի» բնագիրն ունեցել է ուրիշ բառեր, որոնցով երկրորդ ընդգծուած միտքը տրամաբանօրէն կապուել է առաջին ընդգծուածի հետ։ Դժուար է կուսել, որ այդ բառերով առաջին ընդգծուած մտքից յետոյ արտայայտուել է բացի... միտքը, որով մասունքների գիւտի շնորհին արժանացած բարեպաշտ արքան յանուանէ համեմատուել է երկնային մէկ այլ շնորհի արժանացած, այն է՝ Աղուանքը դարձի բերած իր նախնու՝ Վաչագան Քաջի Հետ, որն էլ այնուհետեւ համեմատուել է (երկրորդ ընդգծուած մտքում եւ ամենայն իրաւացիութեամբ) Կոստանդիանոսի եւ Տրդատի Հետ։

Նկատենք, որ ի ձեռն անցումը, որով սկսուում է մեր ընդգծած երկրորդ հատուածը, «Պատմութիւն Աղուանից»-ի բազմաթիւ ուրիշ ենթատեքստերում օգտագործուում է (երբեմն՝ ընդ ձեռն տարբերակով), երբ խօսքը վերաբերում է քրիս-

տոնական հաւատքով լուսաւորուելուն։ Օրինակ՝ «Աղուանից միաբան լուսաւորելն ի ձեռն (a ընդ ձեռամբ) Ուռնայրի արքայի» (Ա.թ, էջ 14.3); «Կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան» (Ա.թ, էջ 14.11-12); «...իբրեւ լուսազմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, որ ի ձեռն սրբոյն Գրիգորի նշանք եւ արուեստք գործեցան» (Ա.ժա, էջ 18.17-18); «...զի բնական լուսաւորութիւն երկրիս Արեւելեաց ի ձեռն (bl ընդ ձեռն) սրբոյն Եղիշայի յերուսաղէմէ եղեալ» (Ա.իւ, էջ 97.20-98.1); «Հաստատելն ի հաւատս զՀոնաստանսն... եւ նոցա քաղցրութեամբ ի ձեռն սքանչելեացն լսել» (Բ.խ, էջ 240.16-18); «Հաւատալն Հոնաց ի Քրիստոս ի ձեռն եպիսկոպոսին Իսրայէլի վարդապետական շնորհիւ» (Բ.խա, էջ 248.4-5)։ Իսկ Վաչագանի ձեռքից (ձեռքով) բանակի՝ «աւարամասն» (այսինքն՝ առաւելակական մի բան) ստանալու պարզ մտքի դէպքում աւելի սպասելի կը լինէր «ի ձեռաց» արտայայտութեան օգտագործումը, ինչպէս ունենք այլ ենթատեքստերում։ Օրինակ՝ «... ձեռնադրի Եղիշայ ի ձեռաց սրբոյն Յակովբայ» (Ա.գ, էջ 10.9); «Հաւատալն Ուռնայրի եւ մկրտելն ի ձեռն սրբոյն Գրիգորի» (Ա.թ, էջ 14.2); «...որ վկայեաց ի Մասքութս ի ձեռաց Սանեսանայ արքային» (Ա.ի, էջ 64.17-18)։

Բացի այդ, մեր կողմից ընդգծուած հատուածների միջեւ ընկած նախադասութիւնը (բանակի մասին) իր բովանդակութեամբ միանում է չընդգծուած առաջին հատուածի սիւժէին, որտեղ ասուում է, թէ ում են բաժանուել մասունքները։ Այդ սիւժէն սկսուել էր մի քանի նախադասութիւն վերեւ. «Աստուանայր հրամայէր թաւաւորն տալ մասն իրաքանչիրումն եպիսկոպոսաց՝ առ ի բաշխել վիճակելոց իրեանց. եւ մեծագոյն ինչ մասն յԱմարաս հրամայէր թո-

ղով ի Աշխարացն. եւ զայն մեծաւ զգուշութեամբ եւ զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ պահէր թագաւորական կնքով կնքեալ» (էջ 82.19-22-83.1)։ Իսկ նրա շարունակութիւնը (այսինքն՝ մեր կողմից չընդգծուած առաջին եւ երկրորդ հատուածները միասին, առանց ընդմիջարկման) պէտք է լինէր այսպէս. «Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն... Անդանաւր բարեացապարտն Վաչագան արքայ զհոգեւորական եւ զգերաշխարհիկն զայն աւար առեալ, ...եւ քրիստոսածողով բանակին աւարամասն առեալ՝ զողորմութեանցն Աստուծոյ զբերումն անճառաբար ստանային...»։ Մնացածն արդէն կորած է ի ձեռն անցումով սկսուող մտքի մէկընդմիջման պատճառով։

Դժուար է լրիւ ճշգրտութեամբ վերհանել, թէ ինչպէս են կատարուել նախադասութիւնների այսպիսի մէկընդմիջումները։ Կարելի է միայն ենթադրել, որ «Վաչագանի վէպի» հեղինակը, աւարտելով Գրիգորիսի նշխարների յայտնաբերումն սիւժէն եւ անցնելով ուխտաւորների վերադարձող բանակի երթի նկարագրութեանը, հաւանաբար յարմար է գտել այդ տեղում ընդմիջարկութեան ձեւով գնատեղական տալ Վաչագան Բարեպաշտին բաժին հասած շնորհին («զայն աւար առեալ, որ էր անանց եւ անպատմելի բարեացն առիթ անա») եւ համեմատուել է դա իր հետնախնիների նախնիների նախնիներին հետ («զոր նախ եղելոց թագաւորացն նախ քան զնա իւր իսկ նախնեացն ոչ ոմեք համբարեցաւ այսպիսի մեծաւքանչ պարգեւք»)։ այդտեղ նա վերապահում է արել (բացի... անցումով) միայն քրիստոսագոյնտ արքայ Վաչագանի (Քաջի) համար, որին եւ իր քրիստոսածողով բանակին նոյնպէս առիթ էր եղել (ինչպէս յիշում ենք Գիւտի թղթից) «աւարամասն» ստանալ «զողորմութեանցն Աստուծոյ»։ դրանալ «զողորմութեանցն Աստուծոյ»։ դրանալ «զողորմութեանցն Աստուծոյ»։

նից յետոյ վերջինիս («երջանիկն այն») իրաւացիորէն Համեմատել է Կոստանդիանոս կայսեր եւ Տրդատ արքայի հետ՝ անուանելով «արեւելցիների» «դուռն լուսոյ աստուածագիտութեան եւ բազմազան բարեաց աւրինակ»։ ապա նորից շարունակել է Վաչագանի (Բարեպաշտի) ուխտաւորների բանակի «Հայեցուցանող պայծառութեամբ... յաւրինեալ» ճանապարհի նկարագրութիւնը։

Այսպիսով, մենք հնարաւոր ենք համարում ենթադրել, որ երկու ընդգծուած հատուածների միջեւ վերականգնող «բացի... ի ձեռն» հատուածում հաւանաբար եղել են Վաչագան Քաջին վերաբերող քրիստոսաժողով բանակ եւ ւարամասն (կամ դրանց նման) բառերը, որոնց ենթատեքստը գուցէ ձեռագրի թերթի խոնացածութեան պատճառով լաւ հասկանալի չի եղել Մովսէս Դասխուրանցու (կամ մի նախորդ գրչի) համար. այդ պատճառով նա նոյնացրել է դա նախորդող՝ Վաչագան Բարեպաշտի կողմից բանակին աւարամասն բաժանելու սիւժէի հետ եւ իրեն թոյլ տուել խոնացած եւ անհասկանալի հատուածի փոխարէն պարզապէս կրկնել բանակին Գրիգորիսի մասունքներից աւարամասն յատկացնելու արտայայտութիւնը։ Իհարկէ, ամենակարեւոր պատճառը եղել է այն, որ այդ խոնացած էջում Վաչագան (Քաջ) արքայի մասին կարգալով՝ Մովսէս Դասխուրանցին (կամ մի նախորդ գրչի, կամ նրան թելադրողը) մտքով չի անցկացրել, որ բնագիրը խօսում է երկրի իրական լուսաւորիչ թագաւորի մասին (իրեն յայտնի Ուռնայրի փոխարէն)։ Այդպէս ժ (կամ գուցէ՝ Ը-թ) դարի «բնագրագէտը» կատարել է մեր ընդգծած երկու հատուածների միջեւ ընկած նախադասութեան այնպիսի փոփոխութիւն (ի բարեբախտութիւն մեր ժամանակների աղբիւ-

րագէտի՝ ոչ լրիւ հմուտ ձեռով), որպէսզի ամբողջ ենթատեքստը վերաբերի Վաչագան Բարեպաշտին։

* * *

Ինչպէս առիթ եղաւ տեսնելու առանձին դրուագների կապակցութեամբ, «Վաչագանի վէպը» կանոնաւոր տեղեկութիւններ չի հաղորդում Վաչագան Բարեպաշտին նախորդած թագաւորների գործերի մասին։ Հեղինակին լրիւ բաւարար է թուացել նրանց անունների թուարկման հատուածում համառօտ տրուած գնահատականը. «Յորոց բազումք ի սոցանէ աստուածասէր եւ բարեպաշտ վարուք կեցեալ՝ տարան զիւրաքանչիւր ժամանակի վաղճան» (Ա.ժե, էջ 41.18-42.1-2)։ Դրա պատճառն անկասկած շատագոյն «վէպի» իւրայայտուկ սկզբունքն է՝ իր հերոսին բարձր ներկայացնել ամէն ինչից ու բոլորից, ընդ սմին նրա իսկ նախնիներից, որը փաստօրէն արձանագրուած է հէնց շարունակութեան մէջ. «սակայն ոչ ինչ ումեք ի նոցանէ այսպիսի աստուածային եւ հոգեւոր ծածկեալ գանձ յայտնեալ ընձեռնեցաւ, որպէս վերջին Վաչագանայ» (էջ 42.2-3)։ Հաւատարիմ մնալով նշուած սկզբունքին՝ «Վաչագանի վէպ»-ը փաստօրէն բացառութիւն չի արել նաեւ միայն մի տեղում «սուրբ» կոչուող (Ա.ժդ, էջ 40.16) Վաչէ Բ արքայի համար, որին այնքան պատուաւոր բնութագրումների էր արժանացրել նրա ժամանակակից Հայոց կաթողիկոս Գիւտ Արահեզացին («Վկայդ (a վկայ) Քրիստոսի, չարչարակից խաչին, ի հրեշտակաց փառամատոյց պատմուճանաւ զարդարեալ անգարշ որդեակ իմ Վաչէ, Աղուանից արքայ»)58։

Նշուած պատճառով Վաչագանին նախորդած թագաւորների՝ մասին միայն պատահական, յամենայն դէպս, ոչ կանո-

նաւոր տեղեկութիւններ են պահպանուել երկի առանձին դրուագներում։ Դրանցից մի քանիսը Վաչագան Քաջի, Վաչէ Ա-ի եւ Ուռնայրի մասին քննարկեցինք վերելում։ Նմանատիպ մի յիշատակութիւն է պահպանուած նաեւ Ա.իգ գլխի վերնագրում՝ Ե դարի առաջին կէսում թագաւորած Եսվաղէն արքայի մասին, որի ոչ օրինական որդի (պոռնկորդի) է անուանուած Յրի քաղաքի «գործակալ» կամ կողմնապահ խոնկորիկ նախարարը։ Ինչպէս վերը առիթ եղաւ նշելու, «Պատմութիւն Աղուանից»-ում «Վաչագանի վէպի» բնագրի բաժանումը գլուխների եւ դրանց վերնագրումը կատարուել է Մովսէս Դասխուրանցու կողմից։ Սակայն այստեղ կարեւոր է վերապահուած անել այն մասին, որ այդ վերնագրերից բնագրային իմաստով թերեւս ոչ բոլորն են ժ դարի հեղինակի ստեղծագործութիւնը։ Օրինակ, ըստ Կիմ Ղահրամանեանի արդարացի ենթադրութեան՝ Ա.ժգ գլխի վերնագիրը, ամենայն հաւանականութեամբ, պատկանել է բուն երկին եւ եղել հէնց նրա վերտառութիւնը59։ Ուշագիւր քննուելիք երեւում է, որ Ա.իգ գլխի վերնագիրն իրականում «Վաչագանի վէպի» բնագրի մի մասն է, որը ժ դարի պատմիչի կողմից վերածուել է գլխագրի։ Ըստ այդմ, մեր կարծիքով, տուեալ հատուածի բնագիրը (սկսած Ա.իգ գլխի վերջին նախադասութիւնից՝ մինչեւ Ա.իգ գլխի առաջին արտայայտութիւնը) անհրաժեշտ է ընթերցել այսպէս (վերնագրի մասն ընդգծում ենք). «Եւ մինչ դեռ զայս արքայն նշանագործութիւնս (bclrz չիք նշանագործութիւնս) պատմէին առաջի արքային, լսելի լինէր նմա (a չիք լսելի...նմա) ի սոյն խորհուրդ տեսիլ մի եւ խոնկորիկա՝ պոռնկորդայն (bclrz խոնկորիկ պոռնկորդի) Եսվաղէն արքայն Աղուանից (bclrz չիք Աղուանից), որ էր կարգեալ կողմ-

նապահ։ Եւ (bclrz չիք Եւ) պատմէ արքայի այրն այն՝ խոնկորիկ անուն, որում (bclrz որոյ) ի Յրի (bclrz Յրի) յայտնեցան Ջաքարիա սուրբն եւ Պանդալէոն (a երանելին Ջաքարիաս եւ սուրբն Պանդալիոն յայտնեցան փիլ յայտնեցան... Պանդալէոն)» (էջ 77.16-17-78.2-6)։ Սա մի կողմից՝ նշանակում է, որ անհրաժեշտութիւն առաջանալիս պէտք է աւելի ուշադիր ճշտել իւրաքանչիւր վերնագրի բնագրի պատկանելութիւնը ժ դարի պատմիչին (Ջ դարի անանուն հեղինակի փոխարէն), (Ջ դարի անանուն հեղինակի փոխարէն), իսկ միւս կողմից՝ թոյլ է տալիս մեզ առաւել վստահութեամբ վերաբերուել Եսվաղէն թագաւորի ու խոնկորիկ նախարարի ազգակցական կապի մասին վերաբերանք՝ իբրեւ «Վաչագանի վէպին» յանգող։

Կատարուած աղբիւրագիտական ճշգրտումը կարեւոր է այն առումով, որ թոյլ է տալիս որոշ պատկերացում կազմել Մաշտոցին ժամանակակից Եսվաղէն թագաւորի գահակալման տեղեկութեան մասին՝ ստիպելով նրա իշխանութեան վերջին տարիները հնարաւորին չափ մօտեցնել Վաչագան Բարեպաշտի ժամանակներին։ Ինչ վերաբերում է Եսվաղէնի գահակալութեան առաջին տարիներին, գահակալութեան լեզուի համար Մաշտոցի կողմից գրերի ստեղծման մասին պատմող տեղեկութիւնների հիման վրայ մասնագէտները նրա ուղեւորութիւնը Բուն Աղուանք եւ հանդիպումը երկրի Երեմիա եպիսկոպոսի եւ Եսվաղէն արքայի հետ (Կորիւնը վերջինիս կոչում է Արսվաղ, Մովսէս խորհնացին՝ Արսվաղէն, իսկ Պետրոս Սիւնեցին՝ Եսվաղէն) թուական Պետրոս Սիւնեցին՝ Եսվաղէն) թուական թթ. կէսից մինչեւ 20-ականների կէսն ընկած ժամանակով60։

Տեղին նշենք, որ մեր կարծիքով, անհրաժեշտ է նախապատուութիւնը տալ

Կորիւնի վկայութիւններին (չշփոթուելով ՊատմաՏօր շարադրանքի փոքր-ինչ այլ դասակարգութիւնից) եւ Մաշտոցի հետ Եւփադէնի հանդիպման ժամանակը հասցնել մինչեւ 420-ական թթ. վերջը: Բանն այն է, որ Մաշտոցն Աղուանք հասաւ իր երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակ⁶¹: Դրանից մի քանի տարի առաջ նա այցելել էր Վիրք, հանդիպել Բակուր թագաւորին ու Մովսէս եպիսկոպոսին եւ Ջաղայ անունով «թարգմանի» օժանդակութեամբ ստեղծել վրացերէն գրերը⁶²: Որոշ ժամանակ անց, արդէն Հայաստանի արեւմտեան հատուածում ծաւալած գործունէութեան օրերին իրեն հանդիպած աղուան երէց Բենիամինի օժանդակութեամբ Մաշտոցը ստեղծեց նաեւ աղուանական գիրը. «Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգաւ, Բենիամէն անուն. եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ եւ հաստատեալ կշռէր»⁶³: Ըստ պատմիչի՝ կայսրութեան տարածքից վերադարձի պահին Հայոց արքան Արտաշէս Ե-ն էր, որը թագաւորել է 422-428 թթ. («Եւ ինքն բազում աշակերտաւք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց եւ հասեալ ի Նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին») ⁶⁴:

Իր երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ընթացքում Մաշտոցը Բուն Աղուանքից յետոյ այցելում է Գարդմանաձոր, ուր հանդիպում է գաւառի իշխան ինուրսին («Եւ հանդէպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում անուն ինուրս կոչէին»), ապա հասնում Վիրք՝

արդէն Արչիլ թագաւորի մօտ («Առ որով ժամանակաւ Արճիւղ անուն թագաւորեալ Վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն»), որից յետոյ մտնում է նաեւ Գուգարք՝ Աշուշայ բղեշխի մօտ («Յայնժամ իշխանին Տաշրացուց, առն պատուականի եւ աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով») ⁶⁵: Վերադարձին նրան դիմաւորում է միայն Սահակ Պարթեւը («դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց. եւ եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ եւ ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր եւս նորագործ իրացն») ⁶⁶: Մեր կարծիքով, Կորիւնի արժանահաւատ հաղորդումներէն բխում է, որ Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնը աւելի ճիշտ կը լինի թուագրել Սասանեանների կողմից 428 թ. Մեծ Հայքի թագաւորութիւնը վերացնելուց յետոյ ընկած ժամանակով (եւ միաժամանակ՝ 431 թ. տեղի ունեցած Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ, որի մասին հիւսիսային նշուած ուղեւորութիւնից յետոյ անմիջապէս յիշատակում են ե՛ւ Կորիւնը, ե՛ւ ինուրսացիին): Այդ ժամանակ Սասանեանների կողմից հանուելով Մեծ Հայքի կազմից՝ Ուտիք նահանգը (իր, ըստ ամենայնի, կենտրոնական Գարդման գաւառով)՝ միացուել էր Աղուանքին, իսկ Գուգարքը՝ Վիրքին ⁶⁷: Կորիւնի տեղեկութիւնները մի կողմից՝ ապացուցում են նոր վարչական միաւորների կազմում այդ նահանգների՝ որոշակի ինքնուրոյնութեան կարգավիճակ ունենալը, իսկ միւս կողմից՝ ցոյց տալիս, որ Աղուանք-Գարդման եւ Վիրք-Գուգարք Մաշտոցի այցելութիւնների գլխաւոր նպատակը, ըստ երեւոյթին, պարզապէս լուսաւորական չէր (ինչպէս որ էր

դէպի Վիրք առաջին այցելութեան պարագայում): Ենթադրելի է, որ Մաշտոցի վերը նշուած հանդիպումների արդիւնքում է լուծուել պետականութիւնը հէնց նոր կորցրած Հայ ժողովրդի եւ Հայոց եկեղեցու համար չափազանց կարեւոր մի խնդիր՝ Վիրքի եւ Բուն Աղուանքի թագաւորութիւնների եւ այս կամ այն չափով նրանց ենթակայացուած էթնիկապէս հայկական շրջանների միջեւ ձեւաւորուելիք յարաբերութիւնների կոնկրետ պայմանների ճշտումը (դրանից յետոյ պետական աշակցութիւնից այլեւս զրկուած հայերէնը պահպանեց իր «պետական» լեզուի կարգավիճակը Ուտիքում ու Գուգարքում եւ, բացի այդ, ամենայն հաւանականութեամբ, մնաց իբրեւ ժամաստեղութեան երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում՝ համապատասխանաբար աղուաներէնի ու վրացերէնի կողքին):

Աւելացնենք, որ Մովսէս ինուրսացու այն տեղեկութիւնը, թէ Եւփադէնի մօտ հասնելուց յետոյ Մաշտոցը Սիւնիքից կանչել տուեց Բենիամին «շնորհաւոր թարգմանին» (Վասակ Սիւնի իշխանի եւ Անանիա եպիսկոպոսի օգնութեամբ) եւ նրան մասնակից դարձրեց իր յաջող գործունէութեանը (բայց միայն այսքանը), ծունկութեանը (բայց միայն այսքանը), թերեւս, իր հիմնական գծերով իրականացուած նրա վկայութեանը, աղուաներէն գրերի ստեղծման նպատակով Մաշտոցի եւ Բենիամինի աւելի վաղ հանդիպման մասին («Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա եւ առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամալանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանկուես ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի

եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցեկազունին այնորիկ Գարգարացուց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն եւ քահանայս կացուցեալ դրանն արքունի՝ ինքն դառնայ ի Հայս») ⁶⁸: Կորիւնի եւ ինուրսացու հաղորդումների միջեւ առկայ հակասութեան պատճառով ՊատմաՏօր վկայութիւնը ամբողջութեամբ խոտանում է, օրինակ, Հրաչեայ Աճառեանի կողմից ⁶⁹: Ուրիշ մասնագէտներ սովորաբար «մոռանում են» Կորիւնի վկայութեան մասին կամ դրան վերագրում ինչ-ինչ կիսաֆանտաստիկ մեկնաբանութիւններ, որոնց քննութիւնը դուրս է սոյն աշխատանքի խնդիրների շրջանակից ⁷⁰: Իրականում Մովսէս ինուրսացին լիովին կարող էր ե՛ւ Կորիւնի վկայութիւնները լրացնող տեղեկութիւններ ունենալ, ե՛ւ դէպքերից տասնամեակներ անց շփոթել կամ ոչ ճիշտ հերթականութեամբ դասաւորել ունեցած տեղեկատուութիւնը: Հնարաւոր է նաեւ ենթադրել հետագայ արտագրողների վրիպումներից առաջացած ինչ-ինչ թիրիմացութիւններ: Օրինակ՝ բաւական է վերը բերուած բնագրի «որովք ստեղծ» բառերի փոխարէն ՊատմաՏօր ինքնագրում ենթադրել «որով էր ստեղծեալ» բառակապակցութիւնը, եւ հիմնական հակասութիւնը ուղղակի կը վերանայ: Իսկ Սիւնեաց Անանիա եպիսկոպոսի՝ ոչ միայն աղուաներէն գրի ստեղծման հետ կապ ունենալը, այլեւ ընդհանրապէս կասկածելի էր համարում դեռեւս Հրաչեայ Աճառեանը ⁷¹:

Մեզ թւում է, որ Վրաց գիրը ստեղծելուց ու ներդնելուց անմիջապէս յետոյ կամ, յամենայն դէպս, միեւնոյն ծրագրի շրջանակներում Մաշտոցը ոչ միայն Բե-

նիամինի օժանդակութեամբ ստեղծել է նաև Աղուանից գրերը, այլև, ամենայն հաւանականութեամբ, նոյն Բենիամինի միջոցով փորձել է դրանք ներդնել Աղուանքում: Ենթադրելի է, որ առանց մեծ վարդապետի ներկայութեան Բենիամինն այնտեղ յաջողութեան չի հասել, որից յետոյ տեղափոխուել է Սիւնիք եւ ինչ-որ ծառայութեան անցել նահանգի եպիսկոպոս Անանիայի մօտ, մինչեւ որ նրա կողմից Կապադակ է ուղարկուել մի քանի տարի անց այնտեղ ժամանած Մաշտոցի կանչով եւ նրա գլխավորութեամբ աւարտին, հասցրել աղուաներէն գրի ներդրման առաքելութիւնը (հետագայում, միեւնոյն է, գոնէ Հայոց եւ Վրաց գրերի համեմատութեամբ մեծ բարձունքների չհասած⁷²):

Ժամանակային ցանկացած տարբերակի ընդունման պարագայում հասկանալի է, որ ինքնուրուի նախարարի «ոչ օրինական» ծնունդը հնարաւոր չէ վերագրել նրա հայր Եսվաղէնի եւ Մաշտոցի հանդիպման օրերին: Հակառակ դէպքում՝ Վաչագան Բարեպաշտի օրօք նա առնուազն 70-80 տարեկան կը լինէր, եւ «Վաչագանի վէպի» հեղինակը դժուար թէ նրա մասին գրէր՝ «պոռնկորդի», «այրն այն» (Ա.Իգ), «ինքն աշտանակեալ ի ձի՝ ճեպով հասանէր» (Ա.ԺԹ) եւ այլն: Թուարկուած բնութագրումները ստիպում են մտածել, որ հեղինակի խօսքը ոչ աւելի քան 50-55-ամեայ անձնաւորութեան մասին է, որն այսպիսով, պէտք է ծնուած լինէր 440-ական թթ. ոչ վաղ: Այսինքն՝ կարելի է չկասկածել, որ գոնէ մինչեւ այդ թուականները պէտք է հասցնել ինքնուրուի հայր Եսվաղէնի կեանքի եւ իշխանութեան վերջին տարիները:

Թերեւս աւելի քան բնական կարելի է համարել ստացուած պատկերը, ըստ որի՝ Եսվաղէնի գահակալութիւնը փաստօ-

րէն տեւել է մինչեւ Վարդանանց ապստամբութիւնը եւ ժառանգորդութեան իմաստով բարեյաջող աւարտուել՝ թագը Վաչէ Բ-ին փոխանցելով: Հակառակ դէպքում, ընդհանուր առմամբ, սպասելի կը լինէր, որ ժամանակով մօտ կանգնած սկզբնաղբիւրը՝ «Վաչագանի վէպ»-ը, որը գիտէ, օրինակ, Վաչէ Բ-ի եւ Վաչագան Բ-ի միջեւ առկայ «առանց թագաւորի կացեալ» 30-ամեայ միջակայքի մասին, որեւէ յիշողութիւն պահպանած կը լինի նմանատիպ ինչ-որ անհարթութեան վերաբերեալ:

Տեղին նշենք, որ դէպքերին ժամանակակից Եղիշէ պատմիչը ոչինչ չի յայտնում Վարդանանց պատերազմի ժամանակ Աղուանքում գահակալած արքայի մասին: Մի դրուագում նա յիշատակում է երկրի հազարապետին եւ եպիսկոպոսին (առանց անունները տալու), որոնք 450 թ. ժամանում են Հայաստան եւ օգնութիւն խնդրում Վարդան Մամիկոնեանից Աղուանքում հալածանքներ սկսած Պարսից զօրքի ու մոգերի դէմ: Դրանից յետոյ Հայոց զօրքի մի մասը սպարապետի գլխավորութեամբ շարժուած է հիւսիս, Լոփնասի ճակատամարտում ջախջախում Չոզի մարզպան Սեբուխտի բազմացեղ զօրաբանակը եւ աղուանների հետ միասին ազատագրում երկրի բոլոր ամրոցներն ու բնակավայրերը⁷³: Վարդան Մամիկոնեանը գրաւում է նաև «Հոնաց պահակը» (=Չոզի ամրութիւնները), որոնց պաշտպանութիւնը յանձնում է Աղուանից արքայատոհմից ոմն Վահանի. «Խաղային գնային այնուհետեւ ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկքն. առնուին քանդէին զպահակն, եւ կոտորէին զգաւրսն, որ ի ներքս բնակեալ էին, եւ զդուռն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»⁷⁴: Վերջինս մեկնում է

հիւսիսկովկասեան Հոնաց ցեղերի մօտ եւ նրանց համոզում գալ Չոզ եւ պայման կապել ապստամբ Հայերի ու աղուանների հետ Սասանեանների դէմ միասին պատերազմելու մասին:

Ինչպէս տեսնում ենք, Եղիշէն չի նշում Վահանի՝ թագաւոր լինելու մասին: Ծիշտ է, Հոնաց կամ Չորայ (Չոզի) պահակի հսկողութիւնը, որը վստահուեց նրան, այս դարաշրջանում հէնց Աղուանից թագաւորների առանձնաշնորհն էր: Այդպէս էր, օրինակ, Վաչէ Բ արքայի ապստամբութեան օրերում, որից օգտուելով էլ՝ վերջինս քանդեց ամրութիւնները եւ օգնութիւն ստացաւ նաև հիւսիսկովկասեան ցեղերից («խրամատեաց զպահակն Չորայ, եւ անցոյց յայս կոյս զգաւրսն Մասքթաց. միաբանեաց զմետասան թագաւորս լեռնորդեայն, եւ ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին, եւ բազում վնաս արար զաւրացն արքունի»⁷⁵: Սակայն նորից յիշենք, որ եթէ Վահանը (կամ մէկ այլ անձնաւորութիւն) թագաւոր եղած լինէր Եսվաղէնի ու Վաչէի միջեւ, ապա սպասելի կը լինէր այդ մասին յիշատակութիւն գտնել «Վաչագանի վէպ»-ում:

Վաչէ Բ-ի («Աղուանից արքայի») մասին Եղիշէն հաղորդում է մի քանի ուշադրաւ եւ մեզ համար կարեւոր (թէպէտ եւ ոչ միանշանակ հասկանալի) մանրամասնութիւն: Նախ՝ արքան սկզբնապէս քրիստոնեայ էր եղել եւ Սասանեան Յագարիստոնեայ էր եղել եւ Սասանեան Յագարիստի հարկադրանքով էր մոգութիւն ընդունել («Եւ մինչդեռ նոքա (=Յագարիստի որդիներ Որմիզը եւ Պերոզը - Ա. Թ.) յայնմ խռովութեան էին, ապստամբեաց եւ Աղուանից արքայն. վասն զի քեռոր էր նոցա, եւ ըստ կարգի Հայերնի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ, եւ Յագարիստ արքայից արքայ բռնի մոգ աւերար»⁷⁶: Ապա՝ ապստամբելով պարսիկնե-

րի դէմ՝ նա ոչ միայն ինքն էր վերադարձել քրիստոնեայ հաւատքին, այլև ստիպել էր դա անել իր «ի բնէ մոգ» մօրը (հաւանաբար՝ խորթ) եւ կնոջը՝ թերեւս խորթ քրոջը («Յեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից. «Ձքոյրդ իմ, ասէ, եւ զքեռորդդ ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգք էին եւ դու քրիստոնեայ արարեր: ...Իսկ սքանչելի այրն... զմայրն եւ զկիսն ետ տանել»)»⁷⁷: Վերջապէս՝ հեռանալով իշխանութիւնից՝ Վաչէն Պերոզի յորդորով իրեն է պահում միայն հազար երդորը մանուկ հասակում նրան «շնորհել էր» հայրը («Խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հաւր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդէառ զայն ի թագաւորէն, եւ նստաւ ի նմա միայնակեցաւք հանդերձ»)»⁷⁸:

Մեր կարծիքով, «հազար երդի» մասին վերջին վկայութիւնը ցոյց է տալիս, որ Վաչէն չի եղել Եսվաղէնի աւագ որդին, որը ժառանգելու էր իր հօր ամբողջ թագաւորութիւնը՝ ի տարբերութիւն մնացեալ որդիների, որոնք ծնողից ստանում էին այսպէս կոչուած «սեպհական» («սեպհական», «սեպհական») կալուածքներ: Այդ դէպքում կարելի է նաև ենթադրել, որ Եսվաղէնի աւագ որդին գուցէ այն Յագարիստն է եղել, որի Վաչագան որդին հետագայում թագաւոր ճանորդին (ըստ «Վաչագանի վէպի»՝ Վաչագանը նոյնպէս ունէր «սեպհական» կալուածքներ)՝ Դիւտական գիւղը, սակայն նրա հայրը թագաւոր չէր դարձել, եւ թագաւորութիւնն էլ վերացուած էր): Բացի դրանից, Եղիշէի տեղեկութիւններից հետեւող առաւել հաւանական պատկերը թերեւս այսպիսին է. Եսվաղէնի վախճանը, ըստ երեւոյթին, համընկել է Յագարիստ արքայից արքայի հալածանքների սկզբին (449-450 թթ.): կամ այդ ժամանակ, կամ գուցէ Վարդանանց

ապստամբութեան պարտութիւնից յետոյ (451 թ.) Սասանեաններն Աղուանից թագաւոր են ճանաչել նրա Վաչէ որդուն, որն ամուսնացած էր Եսպաղէնի՝ ազգութեամբ պարսիկ եւ հաւատով մոգ կնոջ դստեր, այսինքն՝ իր խորթ քրոջ հետ եւ նոյնպէս մոգութիւն էր ընդունել: սակայն նա էլ, միեւնոյն է, յարմար պահին ապստամբեց քրիստոնէութեանն իր հաւատարմութեան պատճառով (459-461 թթ.), որից յետոյ Պերոզ արքայից արքան վճռեց վերացնել թագաւորական իշխանութիւնն Աղուանքում:

Եւ, ամփոփելով Եսպաղէնի գահակալման տեւողութեան խնդիրը, պէտք է նկատել, որ եթէ այն համարում ենք շարունակուած մինչեւ Ե դարի կէսերը, ապա հաւանական է ենթադրել, որ 420-ական թթ., երբ նա Կապադակում հիւրընկալում էր Մաշտոցին, նրա իշխանութիւնը թերեւս նոր-նոր պէտք է սկսուած լինէր, որպէսզի ըստ այդմ տեւէր շուրջ քառորդ դար: Այդ դէպքում նկատենք նաեւ, որ «Վաչագանի վէպ»-ում թուարկուած նրա նախորդները՝ Ուռնայրից յետոյ գահակալած չորս թագաւորների իշխանութեան տեւողութիւնը պէտք է կազմած լինի մօտաւորապէս կէսդարեայ մի ժամանակահատուած: Պայմանականօրէն կարելի է համարել, որ 372 կամ 373 թ. վախճանուած Ուռնայրին յաջորդած Յաւազան եւ Մերհաւան արքաների գահակալութիւնը համընկել է Դ դարի վերջին քառորդին, իսկ Սատոյ եւ Ասայ արքաներինը՝ շարունակուել Ե դարի առաջին երեք տասնամեակներում (կրկնում ենք՝ զուտ պայմանականօրէն):

* * *

«Վաչագանի վէպ»-ը յատուկ չի անդրադառնում նաեւ Աղուանից կաթողիկոսներին, սակայն նրա որոշ տեղեկու-

թիւններ լուրջ աղբիւրագիտական նիւթ են տրամադրում կարեւոր ճշգրտումներ կատարելու համար: Ա.ԺԹ գլխի սկզբում, պատմելով Գրիգորիս Մանկան կողմից Յրի քաղաքում թողնուած Զաքարիա եւ Պանդալէոն սրբերի նշխարների հրաշագործութիւնների մասին՝ հեղինակը յղում է կատարում Յունան եպիսկոպոսապետի խօսքերին. «Իսկ ամենաչար Պարսկաց պապանձական պաշտաւնն զի (bclrz որ) միշտ հակառակ կայր եկեղեցւոյ Աստուծոյ, մտեալ Պարսիկ մի մոգ, ուր կային սուրբ Զաքարեանց (bclrz չիք սուրբ Զաքարեանց) նշխարքն, առ ի ծաղր առնելոյ՝ կամէր զպէտս իւր վճարել: Եւ իբրեւ լուծեալ զխոնջանն, իսկոյն վայրեալ աղիքն՝ արտաքս (a աղիքն ի վայր) թափեալ, չարաչար տանջանաւք (bclr չարապէս) ելանէր (bclr քերքէր) ի կենցաղոյս: Զայս Աշանագործութիւն Յունան Հոնաց եպիսկոպոսապետ (bclrz եպիսկոպոս), որ ի Մասքթաց (a Մսկթաց, cr Մասքութաց, z Մաքթթաց) աշխարհից էր եւ յոյժ ճշմարտախաւս (a ճշմարտախոհ), որ (bclrz չիք որ) իւր իսկ ակամատես եղեալ՝ պատմեաց» (էջ 56.11-18): Միանգամից նշենք, որ թէպէտ Բ խմբի ձեռագրերը ընդգծուած հատուածում տալիս են «եպիսկոպոս» ընթերցումը, սակայն ակնյայտ է, որ ճիշտը a ձեռագրի «եպիսկոպոսապետ» («էպիսկոպոսապետ») ձեւն է, քանի որ որեւէ գրչի համար (տուեալ դէպքում՝ a-ի կամ նրա մայր ձեռագրի գրչի) չափազանց պատասխանատու կը լինէր բնօրինակի «եպիսկոպոս»-ը «եպիսկոպոսապետ», այսինքն՝ «կաթողիկոս» դարձնելը: Այնինչ ցանկացած գրչի (տուեալ դէպքում՝ Բ խմբի մայր ձեռագրի գրչի) «Յունան կաթողիկոս» չճանաչելու պատճառով կարող էր իրեն թոյլ տալ չընդօրինակել բնագրի «եպիսկոպոսապետ»-ի վերջին մասը:

Այսպիսով, մենք տեսնում ենք Յունան Հոնաց եպիսկոպոսապետի յիշատակութիւն, որի մասին ասուում է, որ նա «ի Մասքթաց աշխարհին» էր: Առաջին տպաւորութեամբ, «յոյժ ճշմարտախոհ» այս եպիսկոպոսապետը կարող է համարուել Հոնաց կամ Մասքթաց աշխարհի կաթողիկոս: Սակայն այդպիսի կաթողիկոսութեան մասին հնարաւոր չէ խօսել, քանի որ աղբիւրներում նման բան չկայ: Փոխարէնը լավ գիտենք, որ Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստը մինչեւ Կուր գետի աջափնեակ տեղափոխուելը գտնուել է Չողում՝ ժամանակակից Դերբենդ քաղաքում,⁷⁹ հիւսիսկովկասեան հոների հարեւանութեամբ: Իսկ դա հէնց Մասքթաց աշխարհն էր, տուեալ դէպքում՝ Սասանեան տէրութեան Աղուանք կամ Ռան մարզպանութեան բաղկացուցիչ մաս հանդիսացող Մասքութք կամ Չող (Չոր, Ճորայ) անուանուող երկրամասը:

Աղուանից կաթողիկոսանիստի նըշուած տեղափոխման մասին տեղեկութիւնը հաղորդում է Մովսէս Դասխուրանցու ռեզումե «Աղուանից գաւազանագիրքը»: Մենք այն համարում ենք ժ դարի առաջին կէսում ստեղծուած ժամանակագրական երկ, որը նոյն դարի վերջին եղել է Դասխուրանցու ձեռքի տակ⁸⁰: Պատմիչն արտագրել է նրա բովանդակութիւնը իր երկի վերջին գլխում (գլուխ Գ.իգ՝ «Անուանք Հայրապետացն Աղուանից, ամբ եւ գործք նոցին»), սակայն նրա որոշ տեղեկութիւններ էլ տեղափոխել է «Պատմութիւն Աղուանից»-ի տարբեր գլուխներ: Մասնաւորապէս այդ ձեւով է նա ստեղծել Բ.դ գլխի վերնագիրը («Փոնա ստեղծել Բ.դ գլխի վերնագիրը Աղուանումն Հայրապետական աթոռոյն Աղուանից ի Չողայ (bclr Չորայ) եւ նստուցանել ի մեծ քաղաքին (bclr քաղաքն) Պարսել ի մեծ քաղաքին՝ սակս խաղրաց տաւ զաթոռակալութիւնն»:

Հինին, որ յիսն իւրեանց աւերեցին (a աւերեցին)» եւ շարադրանքը. «Յետ այսորիկ գերեցաւ ի խաղրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք: Ապա յերկրորդ ամին խոսրովու՝ արքայից արքայի, յորժամ զսկիզբն Հայ թուականին եղին (a չիք եղին), ի սոյն ամի փոխեցին զաթոռ Հայրապետութեանն Աղուանից ի Չողայ (bclr Չորայ) քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ՝ վասն հինահայած արշաւանացն թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին Հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծարանց (bclr Մեծիւրեանց), որ կալեալ զաթոռն ամս խճ...» (էջ 118.17-119.6): զաթոռն ամս խճ...» (էջ 118.17-119.6): Բուն Գ.իգ գլխում կաթողիկոսանիստի տեղափոխման մասին պատմիչը թողել է միայն այսքանը. «Տէր Աբաս, որ ի սկզբանն թուականիս Հայոց փոխեաց զաթոռ Հայրապետութեանն ի Չորայ ի Պարտաւ, կալեալ ամս խճ, յեպիսկոպոսութենէն Մեծիւրեանց (bcl Մեծիւրեանց) կոչեցեալ» (էջ 342.18-343.2): Ճիշտ է, դրանից յետոյ Աբասի մասին հաղորդում են ուրիշ, բաւականին մանրամասն տեղեկութիւններ (էջ 343.2-16), որոնք մեզ կը հետաքրքրեն աւելի ուշ: Տեղին նշենք, որ Չող-Դերբենդի՝ կաթողիկոսանիստ լինելու մասին վկայութիւն է պահանջուել նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ի Գ գրքի՝ ժամանակագրական տեղեկութիւններ պարունակող գլուխներից մէկում: Դրանց շարադրանքի հիմքում, մեր կարծիքով, ընկած են Աղուանից կաթողիկոսարանի դիւանում պահուած ձեռագրերի յիշատակարաններում գրանցուած ժամանակագրական վկայութիւններ, որոնք քաղուել եւ ամփոփուել են կամ Մովսէս Դասխուրանցու, կամ նրա որեւէ մի նախորդի կողմից⁸¹: Այստեղ ասուում է. «Եւ ի ՃՁ (731 թ.) թուականին դարձեալ Մալիման շինէ գԴարբանդ

մանակներում (Ե դարի 60-80-ական թթ.) Զող-Դերբենդի կաթողիկոսարանում աթոռակալած Աղուանից եպիսկոպոսապետ է:

* * *

Վաչագան Բարեպաշտի ժամանակահից Շուփհաղիշոյ կաթողիկոսի մասին տեղեկութիւնների քննութիւնը թոյլ է տալիս որոշ ճշգրտումներ կատարել «Վաչագանի վէպի» ստեղծման ժամանակի հարցում: Նրա անունը յայտնում է երկի վերջին հատուածում (գլուխ Ա.իգ)՝ արքայական «բանակի» Ամարասից Դիւտական յետադարձ ճանապարհի նկարագրութեան մէջ: Ամարասի գետակը յետ անցնելուց յետոյ թագաւորը փոքրիկ դադար է յայտարարում («անցուցանէր ընդ նոյն գետն. եւ կացուցանել հրամայէր զգեստակս սրբոցն»), որպէսզի գիւղում հաւաքուած շրջակայ ժողովրդին տներն ուղարկի («եւ եպիսկոպոսացն՝ աւրհնեալ զխառնիճաղանճ բազմութիւնն՝ հրամայէին գնալ յիւրաքանչիւր տեղիս»): Մնում են միայն հոգեւորականները, որոնց հետ թագաւորը, թագուհին եւ արքունականները հասնում են Քարուէնց ամառանոց գիւղը («Եւ զգասս եպիսկոպոսաց եւ երիցանց եւ այլ պատուական արանց (ա արացն) առեալ ընդ սրբոցն՝ տանէր մինչեւ ցՔարուէնց աւթի (bclr յթի) տեղ»): Թւում է, թէ այստեղ եկեղեցական ժողովի նման մի բան է տեղի ունեցել, որի ընթացքում հոգեւորականներն օրհնել են արքային եւ Շուշանիկ աշխարհատիկնոջը. «եւ նոցա միաբան աւրհնեալ զթագաւորն թագուհուին (շ թագուհեան) հանդերձ եւ ամենայն դրամբն՝ ասեն (bclrz ասացեալ). «Ձամենայն բարի, զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ: Եւ շնորհեսցէ մեզ լինել քեզ (bclrz չիք քեզ) ընդ երկայն աւուրս խաղաղասէր ընդ աշխարհի եւ ի փառազարդութիւն եկե-

ղեցւոյ (bclrz եկեղեցեաց) առաւելապէս յորդորելով (a յարդարելով) աւր ըստ աւրէ» (էջ 84. 8-20): Ճիշտ այդպէս Վաչագան թագաւորին հետագայում օրհնել է Աղուէնի եկեղեցական ժողովը. «ԻԲ. Ձայս պայման արարին եպիսկոպոսունք եւ քահանայք եւ ազատ մարդիկ առաջի արքայի, եթէ ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ յեկեղեցոյ բերանոյ աւրհնեալ լիցի (bclr եղիցի) թագաւորն թագուհուին եւ զաւակովն հանդերձ, եւ ամենայն աշխարհովս (bclr աշխարհաւս) հանդերձ, որք յայս ժողովս են, աւրհնեալ եղիցին»⁹³: «Վաչագանի վէպ»-ի հեղինակն այնուհետեւ գրում է. «Եւ առեալ ինքեան զառագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ (a Շուփհաղիշու), եւ յորժամ գեաւղջ ուրուք (bclrz գեղջ ուրեք) յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն եւ հետեւակ սպասարկէր սրբոցն, մինչեւ տարեալ ընդ շինանիստն անցուցանէր: ...Այսոցիկ այսպէս եղելոյ եւ յոյժ հուշակեալ լուր սրբոյն Գրիգորիսի ընդ ամենայն աշխարհն Աւտէացուց (bclrz Ուտիացուց) գաւառին...: Այս ձեւով գային հասանէին ի սեփհական գիւղն Գիւտական (bclrz Դուտական) եւ անդ հանգուցանէին...» (էջ 85.1-16): Բերուած հատուածներից կարելի է եզրակացնել, որ Շուփհաղիշոյ եպիսկոպոսապետը («աւագ» մակդիրը, ուսումնասիրողների արդարացի կարծիքով՝ տեղեկատուական որեւէ արժէք չի ներկայացնում⁹⁴) մասնակցել է Վաչագան Բարեպաշտի երթին եթէ ոչ ամենասկզբից, ապա՝ Ամարասից յետադարձ ճանապարհին՝ Քարուէնցի եկեղեցական ժողովից սկսած:

Շուփհաղիշոն յիշուում է նաեւ Աղուէնի եկեղեցական ժողովի մասնակիցների շարքում որպէս «Պարտաւայ արքեպիսկոպոս»: Ժողովի արձանագրութիւնը պահպանուել է «Պատմութիւն Աղուա-

նից»-ում՝ Վաչագան Բարեպաշտին վերաբերող գլուխների վերջում («ԻԶ. Սահմանագրութիւն կանոնական՝ ի Վաչագանայ Աղուանից (bclr յԱղուանից) արքայէ եդեալ ի ժողովոյն (a ժողովէն), որ յԱղուէնն (r յԱղուէն, l յԱղուեն, c յԱլուէն, b յԱլուեն) եղեւ») եւ Հայոց կանոնադրքի ձեւագրերում («ԼԵ. Սահմանագրութիւն կանոն՝ ի Վաչագանայ Աղուանից արքայի եդեալ ի ժողովն, որ յԱղուանս եդեալ գլուխս Ի»): Գրչական որոշ (երբեմն՝ բաւական մեծ) տարբերումների պայմաններում երկու տարբերակում էլ «Շուփհաղիշոյ (Կանոնագրքում՝ Շոփաղիտակում է առանց լուրջ շեղումների՝ Վաչագան արքայի անունից անմիջապէս յետոյ, ժողովի բուն արձանագրութեան յետոյ, ժողովի բուն արձանագրութեան ամենասկզբում. «Ես՝ Վաչագան՝ Աղուանից արքայ, Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակայ արքեպիսկոպոս...» (Ա.իգ, էջ 89.19-20): Տեղին աւելացնենք, որ ժողովի մասնակիցների թւում յիշատակում է նաեւ «Մատթէ՝ Պարտաւայ երէց»-ը (Ա.իգ, էջ 90.2):

Հետեւելով հայր Ներսէս Ակինեանին՝ կարելի է նշել, որ՝ «Աղուէնի ժողովի կանոնները սերտ կապի մէջ են Շաղովի կանոնները սերտ կապի մէջ են Շաղովի կանոնները կանոններու հետ (համտ. կան. ժ=ժԳ: ժԱ=ԴԹ: ժԲ=ժԱ: ժԵ=Բ: ԻԱ=ժէ): ...Հոս քանիցս կը յիշուի Կանոնագիրք մը («որպէս ի Կանոնսն գրեալ է՝ պատուհաս դիցեն»): ԺԵ. «կանոնները դատեսցին»): ԺԶ. «որ ի կանոնս գրեալ է»): ԻԱ.), որուն համաձայն կարելի է նաեւ, որ, ամենայն հաւանալացնենք նաեւ, որ, ամենայն հաւանալանութեամբ, Աղուէնի կանոնների բնագիրը գտնուել եւ Հայոց կանոնագրքի ժողովածոյ է ընդգրկուել 768 թ. եկեղեցական ժողովն անցկացնելու առիթով Հայոց Սիոն Բալոնացի կաթողիկոսի՝ Պարտաւայցի լուսնութեան օրերում:

Րուսեան մասին («Յամս Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ քորեպիսկոպոսաց, ազատաց եւ ուսմկաց: Ապա կամ եղեւ արքայի՝ առնել ժողով յԱղուէնն՝ բազմամբոխ ատեան, յամսեանն մարերի, որ աւր երեքտասան էր ամսոյն»): Այն, մեր համոզմամբ՝ բխում է ոչ թէ Աղուէնի ժողովի բուն արձանագրութիւնից, այլ աւելացուած է Կանոնագրքի մի վաղ ժողովածոյ կազմողի ճիշտ այնպէս, ինչպէս դա ակողմից, ճիշտ այնպէս, ինչպէս դա արուել է «բացատրագիր» չունեցած շատ ուրիշ կանոնախմբերի համար: Դա նշանակում է, որ Մովսէս Դասխուրանցին կամ նրա մի նախորդն է Աղուէնի կանոնների բնագիրն ընդօրինակել որեւէ կանոնագրքից, ոչ թէ՛ հակառակը⁹⁶: Դա նաեւ նշանակում է, որ անհրաժեշտ է որոշ վերապահումով մօտենալ «մարերի ամսի 13» ամսաթուի հաւաստիութեանը, որը նշուած է առանց արքայի տիրակալութեան համապատասխան տարուայ յիշատակութեան. թէպէտ, հնարաւոր է նաեւ, որ Կանոնագրքի ժողովածոն կազմողը այդ ամսաթիւը քաղած լինէր Աղուէնի ժողովի արձանագրութեան՝ իր ձեռքի տակ եղած բնագրի (գուցէ՛ մագաղաթեայ փաստաթղթի լուսանցքների կամ յետեւի կողմի) ինչ-որ մի նշումից: Աւելացնենք նաեւ, որ, ամենայն հաւանալանութեամբ, Աղուէնի կանոնների բնագիրը գտնուել եւ Հայոց կանոնագրքի ժողովածոյ է ընդգրկուել 768 թ. եկեղեցական ժողովն անցկացնելու առիթով Հայոց Սիոն Բալոնացի կաթողիկոսի՝ Պարտաւայցի լուսնութեան օրերում:

Ժամանակին Շուփհաղիշոյի՝ Պարտաւայ արքեպիսկոպոս կոչուելու (ինչպէս նաեւ Պարտաւայ Մատթէ երէցի յիշատանաւ Պարտաւայ երէցի յիշատանաւ հանգամանքը մեզ համար կուլթեան) հանգամանքը մեզ համար

հիմք էր դարձել կասկածելու Աղուէնի կանոնների հաւաստութեանը (ըստ այդմ՝ նաեւ Շուփհաղիշոյին ճանաչող «Վաչագանի վէպի» հաւաստութեանը), քանի որ, ըստ «Աղուէնից գաւազանագրքից» բխող Բ. դ գլխի տեղեկութեան՝ Աղուէնից կաթողիկոսանիստը համարւում էր Չողից Պարտաւ տեղափոխուած 552 թ.: Ըստ այդմ՝ միայն այդ թուականից յետոյ կարող էր «Պարտաւի արքեպիսկոպոս» կոչուել Աղուէնից եկեղեցու ղեկավարը⁹⁷: Նման տրամաբանութեամբ ենթադրում էինք, որ «Վաչագանի վէպ»-ը եւ Աղուէնի կանոնները ստեղծուել են Զ դարի երկրորդ-չէսին, 552 թ. յետոյ (սակայն դարավերջին սկսուած եկեղեցական հակամարտութիւններից առաջ)՝ իբրեւ Աղուէնից եկեղեցու ծրագրային փաստաթղթեր, որոնց հեղինակները (ենթադրում էինք անգամ՝ միեւնոյն հեղինակը) իրենց ժամանակի ինչ-ինչ իրողութիւններ, այդ թւում՝ Պարտաւի՝ կաթողիկոսանիստ լինելը, վերագրել են իրենց նկարագրած դարաշրջանին՝ Ե դարի վերջին: Սակայն ներկայումս, խորանալով «Վաչագանի վէպի» հաղորդած պատմական նիւթի քննութեան մէջ եւ արդէն նրա առանցքային վկայութիւնների նկատմամբ վստահութեան լոյսի ներքոյ, մենք մեզ պարտաւորուած ենք համարում վերանայելու հին մտեցումը, թէկուզ եւ ստիպուած պէտք է լինենք ենթադրութիւնների օգնութեամբ լուծել որոշ նոր ծագող հակասութիւններ:

Սկսենք նրանից, որ ճիշտ էր «Վաչագանի վէպ»-ը եւ Աղուէնի ժողովի արձանագրութիւնը լրիւ համաժամանակեայ համարելը: Երկու աղբիւրներում յիշատակուող միեւնոյն անձանցից առնուազն մէկի համար առկայ են ժամանակային որոշակի միջակայք ենթադրող տուեալներ: «Վէպի» երեք զրուագներում յիշուած է

«Թագաւորի դրան երէց» Մանասէն: Ա. ժթ գլխում Վաչագանը նրան ուղարկում է ճիղբերի Յրի քաղաքի մօտակայքում գտնուող Հակու գիւղում յայտնաբերուած Զաքարիա եւ Պանդալէոն սրբերի նշխարներն իր մօտ՝ անունով չյիշատակուած թագաւորանիստ տեղափոխելու. «Եւ զՄանասէ՝ զիւր դրան երէցն, որ էր յոյժ հաւատարիմ, հանդերձ իւրովք պաշտանէիւք, առաքէր փութապէս առնուլ առ իւր (a չիք առ իւր) զամենասուրբ նշխարս վկայիցն (bclrz զաստուածային այն գանձ փխ զամենասուրբ...վկայիցն)» (էջ 60.14-16); Ա. իա գլխում, արդէն Գրիգորիսի նշխարների յայտնաբերման պատմութեան մէջ, Արաթանք գիւղում Յովէլ սարկաւազի տեսած երազից յետոյ Վաչագանը Մանասէին եւ դրան սարկաւազ Յովէլին ուղարկում է Ամարաս. «Եւ արքայ յոյժ խնդալից եղեալ՝ զՄանասէ՝ զիւր դրան երէցն եւ զնոյն սարկաւազն առաքէր յԱմարաս յառաջ քան զիւր երթալն»⁹⁸; նոյնը կրկնուած է քիչ անց՝ Քարուէճ գիւղում Վաչագանի տեսած երազից յետոյ. «Եւ անդէն վաղվաղակի զՄանասէ՝ զիւր դրան երէցն յառաջ քան զիւր երթալն յԱմարաս յղեաց»⁹⁹: Այս նոյն Մանասէն Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ հանդէս է գալիս արդէն որպէս «Կապաղակայ եպիսկոպոս»: Յայտնի է, որ Կապաղակը Բուն Աղուէնի թագաւորութեան մայրաքաղաքն էր սկսած մ.թ.ա. Ա դարից¹⁰⁰, ուստի բնական է, որ այդ քաղաքի եպիսկոպոս կարող էր դառնալ թագաւորական «դրան երէցը»:

Տեղին նշենք, որ Վաչագան Բարեպաշտի մայրաքաղաքի անունը «Վաչագանի վէպ»-ում չի տրուած: Սակայն պատահական չի թւում, որ նրա արքունիքի մասին խօսուած է միայն մէկ տեղում՝ Ա. իգ գլխի սկզբում, ա՛յն խոսակցութեան տե-

սիւքի կապակցութեամբ, որը, ինչպէս նշել ենք, Կուրի ձախափնեակում, հետագայի Շամախու տեղում գտնուած Յրի քաղաքի գործակալն էր (Կապաղակից 75 կմ արեւելք). «Եւ գայր այրն առ արքունիսն (bclrz ի պալատն արքունի) եւ թուէր, եթէ արքայ ի քուն իցէ, եւ ինքն չիշխէր (bclrz ոչ իշխէր) զարթուցանել» (էջ 79.1-2): Աւելացնենք, որ Ա. ժթ գլխում խոսակցութեան նոյն Յրի քաղաքում Զաքարիայի եւ Պանդալէոնի նշխարների գիւտից յետոյ ձիով արագ հասնում է Վաչագան արքայի մօտ. «Եւ ինքն աշտանակեալ ի ձի (a դէսպան ձիով bclrz հեծեալ յերիվար մի գեղեցիկ)՝ ճեպէր հասանել առ բարեպաշտն Վաչագան՝ պատմել զերեւումն մեծագոյն նշանացն (bclrz հրաշիցն)» (էջ 60.5-7):

Այս առիթով կարելի է ենթադրում նաեւ նշել այն տեսակէտի արդարացուած չլինելը, ըստ որի՝ Վաչագան Բարեպաշտի թագաւորանիստը կարող էր լինել Դիւտական գիւղը Արցախ (կամ գուցէ՝ Ուտիք) նահանգում¹⁰¹: Դրա միակ հիմքը այն մտայնութիւնն է, որ Վաչագանը Առանշահի է եղել՝ կապ չունենալով Բուն Աղուէնի թագաւորների տոհմի հետ, ուստի նրա տոհմական կալուածքները պէտք է գտնուած լինէին Հայկեան Առանին իբրեւ կուսակալի յանձնուած Կուրի Հայկական աջափնեակում՝ Արցախում եւ Ուտիքում: Սակայն սոյն աշխատանքի սկզբում կատարուած քննութիւնից երեւում է, որ Վաչագանը Բուն Աղուէնի Արշակունեաց թագաւորական հարստութեան սովորական շառակիղն է, ուստի նրա հիմնական տոհմական կալուածքների տեղը պէտք է ենթադրել Կուր գետի ձախափնեակում: Դիւտականի մասին խօսելիս «Վաչագանի վէպ»-ը այն մշտապէս անուանում է «արքունի սեփհական գիւղ», այլ ոչ թէ

արքայական կենտրոն կամ մայրաքաղաք: Այսպէս, գլուխ Ա. ժր-ում՝ «Իսկ զյոլովս ի մանկանցն՝ յիւր սեփհական գիւղն Ռուտակ¹⁰² անուն (= Դուտական – Ա. Յ.)» (էջ 51.3-4); գլուխ Ա. իա-ում՝ «...ժողովեցան ի սեփհական գիւղն արքունի՝ անուացան ի սեփհական գիւղն արքունի» (էջ 66.14-15); գլուխ Ա. իգ-ում՝ «Այս ձեւով գային հասանէին ի սեփհական գիւղն Գիւտական...» (էջ 85.15); «...մինչեւ կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ ի Դիւտական գնաղը՝ յանուն Պանդալէոնի» (էջ 86.4-6): Բերուած օրինակներից երեւում է, որ Դիւտական-Դուտական-Գիւտականը թագաւորին պատկանող տիրոյթ է, նրա նստոցներից մէկը, բայց ոչ երկրի մայրաքաղաքը. այնտեղ անգամ եկեղեցի չկար մինչեւ Պանդալէոնի մատուռի կառուցումը, այդ պատճառով սրբերի նշխարները ստիպուած էին պահել ընդամէնը «ի սուրբ եւ յազնուական սենեկի» (էջ 86.4):

Այսպիսով, Վաչագան Բարեպաշտի «դրան երէց» Մանասէի՝ «Կապաղակի եպիսկոպոս» դառնալն աւելի քան բնական պէտք է համարել: Դրանից բխում է, որ նրա երկու կարգավիճակների (երէցի եւ եպիսկոպոսի) միջեւ անհրաժեշտ է որոշակի ժամանակային միջակայքի առկայութիւն ենթադրել, որը մտնում է «Վաչագանի վէպի» ստեղծման եւ Աղուէնի ժողովի գումարման միջեւ ընկած ժամանակահատուածի մէջ: Իսկ դա արդէն թոյլ է տալիս պնդել, որ նոյն ժամանակամիջոցում կարող էր փոփոխուած տեղի ունեցած լինել նաեւ Շուփհաղիշոյ կաթողիկոսի կարգավիճակի մէջ, որը ինչպէս տեսանք, «Վաչագանի վէպ»-ում կոչուած էր «աւագ եպիսկոպոսապետ», իսկ Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ՝ «Պարտաւայ արքեպիսկոպոս»:

Ժամանակին մենք անդրադարձել

քային նշխարների գիւտի շնորհիւ, Աստ-
ծոյ կամօք առաջնեկի (Պանդալէոն որ-
դու) շնորհման մասին, անմիջապէս ցոյց
է տալիս, որ մեր նախնական տպաւորու-
թիւնը վէպին բնորոշ ոճի արդիւնք է,
իսկ շարադրանքի պահին գիւտից առ-
նուազն 9 ամիս պէտք է անցած լինէր:
Իսկ Ամարասունժ Գրիգորիսի մասունքնե-
րի յայտնաբերման պահին (այս նկարա-
գրութիւնը նոյնպէս անմիջապէս գրուած
ի տպաւորութիւն է թողնում) Վաչա-
գանն արդէն նաեւ պատանեկան տարիքի
(«տղայ հասակով» (bclrz տղայական
հասակաւ), այսինքն՝ գոնէ 13-14 տարե-
կան) դուստր ունէր ինչիկ անունով¹¹⁵,
որը մի նոր ժամանակային միջակայքի
առկայութիւն է ցոյց տալիս:

Ամփոփելով «Վաչագանի վէպի» շա-
րադրման ժամանակի մասին քննութիւնը՝
նշենք, որ այն առաւել հաւանականու-
թեամբ հնարաւոր է վերագրել Զ դարի
ամենաառաջին տարիներին՝ լրիւ չբացա-
ռելով նաեւ Ե դարի ամենավերջին տա-
րիները: Դա կաւատ արքայից արքայի՝
գահին վերադառնալուն (498 թ.) յաջոր-
դած տարիներն են, մինչեւ պարսկա-բիւ-
զանդական փոքրիկ պատերազմը (502-
504 թթ.) եւ հիւսիսկովկասեան հոն-սա-
ւիրների աւերիչ ներխուժումը (503-504
թթ.), երբ «անիծեալ եւ չար Պարսիկք
մարզպանքն» (Ա.ժը, էջ 52.1) երկրում
չկային (նրանց գործառոյթները հաւանա-
բար փոխանցուած էին Աղուանից թագա-
ւորին), երբ Հայաստանում շարունակու-
մ էր Վահան Մամիկոնեանի մարզպանու-
թեան բարեյաջող շրջանը, իսկ Վիրքում՝
Վախթանգ Գորգասալի թագաւորութեան:
Մեր կարծիքով, դա է ամենայարմար ժա-
մանակը «Վաչագանի վէպի» նման մի
ջատագովական երկի, մի վարքագրական
վէպի ստեղծման համար, որի խնդիրն,
այնուամենայնիւ, այդ արքայի ու նրա

տոհմի կանոնաւոր պատմութիւնը գրելը
էջը, այլ այն «ծրագրային» գործերի շա-
րադրանքը, որոնք պէտք է կատարուէին
եւ կատարուեցին նրա օրօք («...եւ կար-
գաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչա-
գանայ արքայէ եղան»)՝ ի շահ Սասա-
նեաններին ենթակայ Աղուանից թագա-
ւորութեան քրիստոնեայ հասարակու-
թեան եւ եկեղեցու ամրապնդման (թագա-
ւորական իշխանութեան եւ եկեղեցական
դասի սերտ համագործակցութեան ճանա-
պարհով)¹¹⁶:

Աւարտելով աղբիւրագիտական տե-
ղեկութիւնների վերլուծութիւնը՝ նշենք,
որ այս ժամանակագրական ճշտումներից
յետոյ աւելի հաւանական է Վաչագան
Բարեպաշտի իշխանութեան աւարտը (որ-
եւէ սկզբնաղբիւրում չարձանագրուած)
ոչ թէ ենթադրաբար դնել կլորացուած
510 թուականին, ինչպէս արուել է մին-
չեւ այժմ, այլ կապել Սասանեան տէրու-
թեան այն ենթադրելի վարչական ռեֆոր-
մի հետ (իր մնացեալ մանրամասներով ա-
ռայժմ՝ անյայտ), որի արդիւնքում կա-
ւատ արքայից արքայի կողմից վերա-
ցուեց նաեւ Վիրքի (Քարթլիի) թագաւո-
րական իշխանութիւնը: Պրոկոպիոս Կեսա-
րացու տեղեկութիւնների հիման վրայ
մասնագէտները Վրաց Գուրգէն թագաւո-
րի գահընկէց արուելը թուագրում են մօ-
տաւորապէս 523 թ.¹¹⁷: Եթէ այսպիսի են-
թադրութիւնն ընդունելի համարուի, ա-
պա Բուն Աղուանքի անտիկ եւ վաղմիջ-
նագրեան թագաւորութեան վերջին ներ-
կայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ Ար-
շակունուն պէտք է վերագրել 38-ամեայ
իշխանութեան մի շրջան (485-523 թթ.):
Իհարկէ, նման մօտեցման դէպքում պէտք
է նաեւ ընդգծել, որ աղբիւրների բացա-
կայութեան պայմաններում այնուամե-
նայնիւ հնարաւոր է Վաչագանի իշխա-
նութեան բարեյաջող առաջին տասնա-

մեակների հիման վրայ անպայման են-
թադրել, որ բարեյաջող է եղել նաեւ մեզ
առայժմ անյայտ վերջին տասնամեակը
(թէկուզ Հայոց եւ Վրաց օրինակով):

* * *

Եւ ամփոփելով կատարուած քննու-
թիւնը՝ կարող ենք վերջնականապէս ար-
ձանագրել, որ ոչ Բուն Աղուանքի Վաչա-
գան թագաւորի, ոչ «Վաչագանի վէպի»
ու Աղուէնի ժողովի հաւաստիութիւնը
մերժելու համար, փաստօրէն, հիմքեր
չկան: Ինչպէս նշեցինք աշխատանքի
սկզբում, ժամանակին մենք սխալուել
ենք՝ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի
կանոնների ստեղծումը Զ դարի երկրորդ
կէսին վերագրելով: Այժմ այդ թուագրու-
մը յետ է գնում մի քանի տասնամեակով
միւսին նոյն դարի սկզբները: Սակայն
միաժամանակ պէտք է արձանագրենք, որ
ստուեալ փոփոխութիւնից նրանց գաղա-
փարական ուղղուածութեան գնահատա-
կանը գրեթէ չի փոխուում: Կուրի հայկա-
կան աջափնեակում ստեղծուած այդ ծրա-
կան փաստաթղթերը պարունակում են
Բուն Աղուանքի Արշակունեաց արքայա-
տոհմի վերջին ներկայացուցիչ Վաչագան
Բ թագաւորի ձեռքով Աղուանից աշխար-
հում (արդէն մարզպանութեան ընդգրկ-
մամբ) կատարուած աստուածայաճոյ գոր-
ծերի շարադրանքը եւ բաւականին բուն ա-
ղուանական ինչ-ինչ իրողոյթների (ռեա-
լուանական ինչ-ինչ իրողոյթների (ռեա-
լուանական ինչ-ինչ իրողոյթների) արդիւն-
քով) մասին, որոնք թանկագին
նշխարներ են աղուանագէտ հետազոտողի
համար: Սակայն, այնուամենայնիւ,
նրանց գաղափարական նպատակն է եղել
Սասանեան տէրութեան գերիշխանութեա-
նը ենթակայ Աղուանք-Առան վարչա-քա-
ղաքական միաւորի մէջ Աղուանից եկեղե-
ցու շուրջ համախմբուած քրիստոնեայ
հասարակութիւնը իր բուն աղուանական
եւ հայկական էթնիկական մասերով ամ-

րապնդել ոչ թէ բուն աղուանական էթ-
նոմալութեան համակարգի գործառման
ոլորտի ընդլայնման, այլ ընդհակառակը՝
Կուրի աջափնեակի հայութեան ազգային-
մշակութային-դաւանական աւանդները
այդ ամբողջ հասարակութեան համար
հաստատագրելու ճանապարհով:

428 թ. Հայոց թագաւորութեան վե-
րացումից յետոյ Այսրկովկասում ստեղ-
ծուեցին Սասանեան տէրութեան 3 մարզ-
պանութիւններ միեւնոյն՝ Հայք (Արմն),
Վիրք (Վարջան) եւ Աղուանք (Առան) ա-
նուններով, ընդ որում ի տարբերութիւն
Հայքի՝ Վիրքում եւ Աղուանքում թագա-
ւորութիւնները չվերացուեցին: Հաւանա-
բար 428 թ. Հայոց Ուտիք նահանգն ար-
դէն անջատուեց ու միացուեց Աղուանից
մարզպանութեանը, ընդ որում նրա մի
մասը (գոնէ Նաղիսաղի ձմերոցը) Բուն Ա-
ղուանից թագաւորի տիրոյթ դարձաւ
(ըստ Եղիշէի): 451 թ. Վարդանանց ապս-
տամբութեան պարտութիւնից յետոյ Հա-
յոց մարզպանութիւնից անջատուեց նաեւ
Արցախի նահանգը, որը նոյնպէս (եթէ ոչ
ամբողջութեամբ, ապա ինչ-ինչ մասերով)
դարձաւ կապաղակում նստող Բուն Ա-
ղուանից թագաւորների տիրոյթ (ըստ
«Վաչագանի վէպի»՝ «Արցախ ամուր աշ-
խարհին յիւրում ծառայութեանն»)¹¹⁸: Ե
դարի վերջի Հայ մատենագիրների (Ղա-
գար Փարպեցի, Մովսէս Խորենացի) տե-
ղեկութիւնների քննութեամբ ցոյց է
տրուած, որ Սասանեան վարչական փո-
փոխութիւնների (ռեֆորմների) արդիւն-
քում մօտ կէսդարեայ ժամանակահա-
տուածում ձեւաւորուել էր «Աղուանք»
հասկացութեան նոր իմաստը. նրա տակ
ընկալուում էր արդէն ողջ մարզպանու-
թեան տարածքը՝ Հակարի (Արցախի եւ
Սիւնիքի սահմանագիծը) եւ Արաքս գե-
տերից մինչեւ Կովկասեան լեռնաշղթայ
տեղից մինչեւ Կովկասեան լեռնաշղթայ
եւ Դերբենդ¹¹⁹: Ուտիքի եւ Արցախի հա-

յուլիանը միջնադարին բնորոշ աշխարհընկալման սկզբունքներով ընդունել էր այդ անունը իբրև «իր» երկրի անուանում, թէպէտ եւ նրա վրայ տարածում էր Կապադակ կենտրոնով Բուն Աղուանքի թագաւորութեան եւ Չող-Դերբենդ կենտրոնով Աղուանից կաթողիկոսութեան իշխանութիւնը: Ժամանակի ընթացքում, յատկապէս մարզպանական եւ եկեղեցական կենտրոնների՝ Կուրի աջափնեայ Պարտաւ տեղափոխուելուց յետոյ, այդ մտայնութիւնը հասաւ այն աստիճանի, որ Արցախի եւ Ուտիքի հայութիւնն սկսեց իրեն համարել «Աղուանք» երկրի իսկական տէրը՝ իսկ Կուրի ձախափնեակի բուն աղուանական, թէկուզ եւ քրիստոնեայ փոքր ժողովուրդների հանդէպ քամահրական վերաբերմունք դրսեւորել՝ իբրև բարբարոսների, լեռնականների եւ այլն, իթանելով այդ ժողովուրդների մասնակի հայացումը¹²⁰: Կրկինք, որ «աղուաններ» մետաէթնիկ (հաւաքական) ընդհանրութեան բազմացեղ մնալը եւ այդ անուան տակ կոնկրետ էթնոսի չձեւաւորուելը պատճառներից մէկն էր «Աղուանք» եզրի արագ եւ գրեթէ անվերապահ ընկալման Կուրի աջափնեակի հայութեան կողմից՝ ի տարբերութիւն, օրինակ, Վիրք մարզպանութեան մէջ մտած Գուգարք նահանգի հայութեան, որն ընկալեց «Վիրք» եզրի տարածումը դէպի հարաւ հական վերապահումներով, քանի որ այդ անուան տակ դարեր շարունակ ճանաչում էր վաղուց կայացած արեւելավրացական ժողովուրդին՝ վրացի-բարթոնէլ էթնոսին¹²¹:

Հէնց այս դարաշրջանին բնորոշ հասարակական ընկալումներն են արձանագրուած նաեւ «Վաչագանի վէպ»-ում եւ Աղուէնի կանոններում: Վերը նշեցինք, որ Վաչագանի երկարատեւ թագաւորութեան օրօք Աղուանքում բազմաթիւ եկե-

ղեցական ժողովներ են գումարուել: Սակայն յատկանշական է, որ մեզ հասած Աղուէնի կանոնները հէնց աջափնեակում տեղի ունեցած մի ժողովի արդիւնքն են, ընդ որում դրանք երկրում հաստատագրում են Հայոց կանոնագրքերի դրոյթների գործառումը: «Վաչագանի վէպ»-ը Աղուանից եկեղեցու կապաղակեան եւ չողեան կենտրոնների մասին ուղղակի տեղեկութիւններ չի հաղորդում, փոխարէնը՝ ամրապնդում է Աղուանքում Գրիգոր Լուսաւորչի, Հռիփսիմէ եւ Գայիանէ կոյսերի, թերեւս՝ Թադէոս առաքեալի եւ յատկապէս Լուսաւորչի թուան՝ Գրիգորիս եպիսկոպոսի պաշտամունքի համակարգը՝ ընդ որում դրան ենթարկելով բուն աղուանական (կապաղակեան եւ չողեան) շրջանի սրբերի՝ Ջաքարիայի եւ Պանդալէոնի պաշտամունքը: Հեղինակը ջանք չի թափում վեհացնելու Աղուանից եկեղեցու Չողի կաթողիկոսարանի հոգեւոր պետերին. այնտեղ աթոռակալած Յունան եպիսկոպոսապետին նա հազիւ յիշում է մի պատահական դրուագում որպէս «յոյժ ճշմարտախաւս», «որ ի Մասքթաց աշխարհին էր», իսկ Շուփհաղիշոն, որը նոյնպէս դեռ Չողում էր աթոռակալում, ընդամէնը մի պահ է երեւան գալիս՝ իբրև «աւագ եպիսկոպոսապետ»: Այնինչ՝ Հայոց Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսը (478-490 թթ.), որի մատանով կնքուած Գրիգոր Լուսաւորչի, Հռիփսիմէի եւ Գայիանէի նշխարները Աղուանք էր բերել նրա աշակերտ Մատթէ երէցը, հռչակում է որպէս «կաթողիկոս» (ըստ Բ խմբի ձեռագրերի ընթերցման՝ «հայրապետ». Ա.Ի.ա, էջ 67.3-4): «Վաչագանի վէպ»-ում չի տրուում Աղուանից թագաւորութեան մայրաքաղաք Կապաղակի անունը (Կուրի ձախափնեակում յիշատակում են միայն Յրի քաղաքը եւ Հակոբ գիւղը), փոխարէնը՝ նրանում ամ-

բողջ Աղուանից եկեղեցու համար սրբագործում են Կուրի հայկական աջափնեակի պաշտամունքային կենտրոնները՝ Ամարասը, Դարահոճը, Սուհառը, Վեհ(հ)կերտը, Դիւտականը եւ այլն: Եւ, փաստօրէն, բուն աղուանական իրողոյթներից «Վէպի» հեղինակի համար լրջօրէն սրբագործման առարկայ է դարձուել միայն ինքը՝ Վաչագան Բարեպաշտ Արշակունի թագաւորը՝ իր Շուշանիկ աշխարհատիկնոջով: Բայց, յաւելենք՝ այնքան յաջող, որ այդ կերպարն օգտագործուել ու շարունակել է յիրաւի հերոսացուել հետագայ դարերի բազմաթիւ կրօնաբարոյագիտական գրուածքներում, մտել հայ իշխանական տների (Առանշահիկներ եւ այլն) տոհմաբանութիւնների, հայ ժողովրդական հեքիաթների ու նոր շրջանի ռոմանտիկ գրականութեան մէջ («Անռոմանտիկ գրականութեան մէջ» («Անհիտ եւ Վաչագան»), դարձել անգամ պետական խորհրդանիշ բարեպաշտութեան ու նուիրումի, որն արդէն այլ ուսումնասիրութիւնների թեմայ է:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

- 1 Մովսէս Դախտուրացու եւ Գրա երկի մասին վերջին ամփոփումը տե՛ս **Ա. Ա. ԱԿՈՅԱՆ, Ալբանիա-Ալյանկ և Գրեկ-Լատինական և Դրեւոնոարմաչական աղբյուրներում, Երեւան, 1987, էջ 150-272:**
- 2 Մովսէս Դախտուրացու աղբյուրների մասին մանրամասն տե՛ս *История агван Моисея Кавкатвацци*, пер. К. Патканова, СПб., 1861, էջ X-XI; **A. Manandian, Beiträge zur albanischen Geschichte**, Leipzig, 1897, էջ 17-22; Գայր Ներ-*Geschichte*, Leipzig, 1897, էջ 17-22; Գայր Ներսէս վրդ. Ակիմեան, *Մովսէս Դախտուրացու (կրչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970; Լ. Ս. Սվազեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից Պատմութեան» աղբյուրները, «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 1972, թիւ 3, էջ 195-206; Կան հանդէս», Երեւան, 1972, թիւ 3, էջ 195-206; **К. А. Каграманян, Источники "Истории страны Алуанк"**, Автореф. дисс... к. и. н., Ереван, 1973; **А. А. Акоюн, Албания-Алуанк**, էջ 177-210:*
- 3 Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Բնական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983:* Երկի ձեռագրերի ծագումնաբանութեան ման-

րամասն քննութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», 15, Երեւան, 1986, էջ 110-143:**

- 4 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, *Մովսէս Դախտուրացի*, էջ 124-150 (142): Ուսումնասիրողը այդ երկը բացարձակ անհամոզիչ փաստարկներով համարում է ժ դարի սկզբի գործ (էջ 149-150), բայց միաժամանակ նշում. «Գրական տեսակետէ, սակայն, գնահատելի պէտք է դատել վէպս, որ գրուած է ծաղկեալ ոճով» (էջ 149):
- 5 Այստեղ եւ այնուհետեւ Մովսէս Դախտուրացու բնագրերը տալիս ենք ձեռագրերի մեր քննութեան հիման վրայ կատարած մեր ուղղումներով, երբեմն նշելով սկզբնօրինակի վերականգնման համար կարեւորութիւն ունեցող **a** կամ **b** (Բ խումբ՝ **bl** եւ **cr** ենթախմբերով) գրագրերի տարբերութիւնները: Ա.ժ-ի գրուածքի մասում օգտագործում ենք նաեւ Հայոց որոշ ժառանգութիւններում պահպանուած հատուածային ընդօրինակութիւնը (Չ. Ժ. դ. ընդօրինակում ՄՄ թիւ 6196 գրագրից, ինչպէս նաեւ Վեներիկի Միսիթարեան միաբանութեան մատենադարանի՝ Ժ.Գ. դ. ընդօրինակում թիւ 200 եւ 201 գրագրերից, որոնց համապատասխան էջերի լուսանկարները մեծահոգաբար մեզ տրամադրեց արքայազն Գայր Եղիա Քիւրաբեանը. սիրով յայտնում ենք նրան մեր խորին երախտագիտութիւնը): Ժամանակին մենք համարել ենք, որ «Պատմութիւն Աղուանից»-ից այդ ընդօրինակութիւնը կատարուել է Ա եւ Բ խմբերի մայրերից անկախ գրագրից (**Ա. Յակոբեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը**, էջ 137): Սակայն այժմ պարզել ենք, որ ժառանգութիւնների մայր օրինակը յանգում է շատ տեղերում իրապատկ խմբագրումներ ունեցող Բ խմբի մայր գրագրին, որից առանձին արտագրուել է նաեւ **bclr** ձեռագրերի ընդհանուր մայրը:
- 6 **К. А. Каграманян, Источники "Истории страны Алуанк"**, էջ 22:
- 7 *Կանոնագիրը Հայոց*, Ա. Աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 501-506: Հարկ է նշել, որ Արքայազնի երկի առաջին մասը առանձին պահպանուած է նաեւ որոշ ժառանգութիւններում (նմտ. Գայր Բարսեղ վրդ. Սարգիսեան, *Արքայազն Մամիկոնից եպիսկոպոսն եւ իր առ Վաչագան գրած թողթը*, Վեներիկ-Ս. Ղազար, 1899, էջ ԺԳ-ԺԵ; Յ. Ս. Անասեան, *Հայկական մատենագիտութիւն, Ե-ժԸ դդ., Բ. Ա.*, Երեւան 1959, էջ 131-137: Համեմատութիւն երեւում է, որ այդ հատուածն ընդօրինակում է կանոնագրի Բ խմբի **r** ենթախմբի որեւէ ձեռագրից:
- 8 *Կանոնագիրը Հայոց*, Բ. Աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 91-100:
- 9 Մանրամասն տե՛ս **Ա. Ա. ԱԿՈՅԱՆ, Ալբանիա-Ալյանկ**, էջ 183-184:

աւելի ճիշտ՝ ճոխացումս վիճակում): Մաշտոցի աշակերտներից մէկը համարուող Անանիա Սիւնեաց եպիսկոպոսի՝ Աղուանք մեկնելու եւ Աղուանից գրերի ստեղծման ու տարածման գործում իբրեւ թէ վճարական մասնակցութիւն ունենալու մասին պատմող հատուածում ժԳ դարի հեղինակը Եսվաղէնին անուանում է «առաջին Ծապոն Արտաշէտեան թոնն քեռ» (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւնեաց, Ի յոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, գլ. ԺԵ, էջ 39): Գլխի վերջում նա յղում է կատարում Ջ դարի հեղինակ համարող Պետրոս Սիւնեցու «Ներբողեանին»։ «Ջայս ցուցանէ մեզ սող ինչ Մովսէս Քերթոզահայրն եւ զբովանդակն ճշգրիտ՝ աշակերտ նորին՝ Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց»։ Մեզ չհասած եւ իրականում ըստ ամենայնի է դարից ոչ վաղ շարադրուած այդ երկից կտորներ են օգտագործել ինչպէս Ստեփաննոս Օրբէլեանը, այնպէս էլ՝ Եսվաղէնի մասին վերջ ճշուած տեղեկութիւնը չիմացող Մովսէս Դաւիթբաշեանին (գլ. Բ.ա, էջ 106-112)։ Նկատելի է, որ ժամանակային տեսանկիւնից Եսվաղէնը կարող էր լինել Գ դարի կէտերին ապրած Ծապոն Ա-ի (242-272 թթ.) քրոջ ոչ թէ թոռը, այլ՝ ծոռան ծոռը։ Բացի այդ՝ վերելում պարզ եղաւ, որ Վաչագան Քաջով սկսուող Աղուանից Արշակունիների արքայատոհմը երկրում իշխանութեան է անցել Գ դարի ամենավերջից ոչ վաղ։ Ըստ այդմ՝ աւելի հաւանական է մտածել, որ Պետրոս Սիւնեցուն հասած աւանդազրոյցի հիմքում ընկած է եղել Ռոմայր արքայի՝ Ծապոն Բ Որմզդէանի (309-379թթ.) քրոջ ամուսինը եղած լինելու իրողութիւնը (արձանագրուած «Վաչագանի վէպ»-ում)։

37 Մովսէսի խորհրդանշանային Պատմութիւն Հայոց, Բ.ձք, էջ 225:

38 Բ խմբի ձեռագրերում այս բառակապակցութիւնը տեղադրուած է գլխի վերնագրի մէջ. «Գիտութիւն երեւման Աստուծոյ մերոյ մերոցս արեւելեացս (bc արեւելեաց, l արեւելեացս, a արեւելիցս), պատմութիւն ճշմարիտ»։ Թէպէտ համեմատական հրատարակութեան հեղինակը հետեւել է Բ խմբի ձեռագրերին, սակայն ուշադիր քննութիւնից երեւում է, որ նրա իրական տեղը գլխի առաջին նախադասութեան սկզբում է, ինչպէս պահպանուել է ա ձեռագրում («Պատմութիւն ճշմարիտ, առաւել քան...՝ ոչ գտաք»)։ Տեղին ճշմանը, որ ամանատիպ դէպքեր, երբ որոշ արտայայտութիւններ մի ձեռագրային մասում գտնուած լինելով գլխի վերնագրի վերջում, միւս ձեռագրային մասում յայտնուում են գլխի սկզբում, կամ մի գլխի վերջից տեղափոխուած են յաջորդ գլխի սկզբը, ունենք նաեւ այլ տեղերում (Ա.ժա. Ա.ժգ-ժէ. Ա.ժէ-ժը. Ա.իա. Ա.իբ-իգ)։ Դրանից պէտք է գալ մի ուշագրաւ ձեռագրագիտական եմֆատիկութեան, որ Մովսէս Դաւիթբաշեանը ինքնագրում կամ (եւ) նրանից ընդօրինակուած

այն առաջին ձեռագրում, որին յանգում են Ա եւ Բ խմբերի մայր ձեռագրերը (հմմտ. Ա. Յակոբեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, էջ 142-143), գլխագրերը գրուած են եղել ոչ թէ սինակների մէջ, այլ լուսանցքում, նախորդ գլխի վերջի եւ յաջորդ գլխի սկզբի տողերի կողքին։

39 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, Մովսէս Դաւիթբաշեանի, էջ 142:

40 Մանրամասն տե՛ս **Ա. Ա. Ակոպյան**, "История Армении" Фавста Бузанда как источник "Повести о Вачагане" (Снова о первом и втором дпрютюнах Фавста Бузанда), "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, էջ 72-81: Մի տեղում «Վաչագանի վէպ»-ը արքայի բերանով հետեւեալ ձեռով է իշխատակում իր աղբիւրի մասին. «Քանզի տեղեկացեալ էր ի հնագրացն պատմութեանէ (bclr չիք պատմութեանէ), եթէ ի վատնեալ (bclr վատնեան) դաշտին, յեզր ծովուն մեծի առեալ էր զնահատակութիւն (a կատարեցաւ ի իս յեզր...զնահատակութիւն) սուրբն Գրիգորիս, եւ բարձեալ աշակերտաց նորին՝ բերին յԱմարաս գեղ եւ եղին առ եկեղեցուն (a յեկեղեցուն, չիք առ), զոր մեծին Գրիգորի էր հիմնարկեալ» (Ա.ի, էջ 65.1-4):

41 Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Գ.ա, էջ 17:

42 Պէտք է կրկնենք, որ այս քննութիւնն ինքնին բաւարար չէ Փաստոս Բուզանդի երկի առաջին երկու դպրութիւնների գոյութեան խնդիրը լուծուած համարելու համար։ Պարզ է միայն այն, որ եթէ այդ խնդիրն ապացուցուած համարուի, ապա կարելի է Փաստոսի առաջին դպրութիւններից քաղուած համարել «Վաչագանի վէպ»-ում (= Մովսէս Դաւիթբաշեանի երկում) պահպանուած շարադրանքը Թաղէտու առաքելի եւ Գրիգոր Լուսաւորչի մասին (Ա.գ եւ Ա.ժդ)։

43 Եկեղեցական առասպելների առաջացման եւ գործառնման (վանական դիցաբանութիւն) առանձնապատկութիւնների մասին մանրամասն տե՛ս **Ա. Ս. Սահակեան**, «Պատմութիւն Հայոց-ճեպ խաչին» գրոյցը եւ նրա տիպաբանութիւնը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1981, թիւ 4, էջ 153-166:

44 Գլուխ Ա.թ, էջ 14.16-18, 15.1 տողատակ։ Տե՛ս ծան. 21:

45 Մովսէսի խորհրդանշանային Պատմութիւն Հայոց, Բ.ձգ, էջ 232:

46 Բնագիրը բերում ենք ըստ Բ խմբի ձեռագրերի եւ ա ձեռագրից 1730 թ. ընդօրինակուած հ գրչագրի, որը պահպանել է մայր օրինակի անխաթար պատկերը a-ի մէջ 1760-ական թթ. Ղունկիանոս դարի կատարած «ճշգրտումներից» առաջ (տե՛ս վերը, ծան. 21):

47 Գլուխ Ա.իը, էջ 97-98: Հմմտ. Կիրիլոսի խօսքերը. «Հարքն մեր եւ ձեր զԵրուսաղէմի հաւատն ունէին, եւ սուրբն Գրիգոր զայն ետ նոցա, եւ մեր գնոյն ունիմք» (Գիրք Թղթոց, Մատենագրու-

թիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 140, 167, 174-179, 182-183): Մանրամասն տե՛ս **Ա. Ա. Ակոպյան**, *Албания-Алуанк*, էջ 184, 253-254:

48 Օրինակ, Ա.ժ գլխում, որն ամբողջութեամբ արտագրուած է Եղիշէ պատմիչից. «Ջի էր նա (bclr չիք նա = Վաչէ թագաւորը – Ա. Յ.) նոցա քեռորդի եւ յառաջ լեալ էր քրիստոնեայ ըստ հայրեանական աւանդին, զոր Ռոմայրն հաստատեաց, եւ անօրէնն Յազկերտ արար բռնութեամբ զնա մոգ»։ Ընդգծուած բառերն այստեղ Մովսէս Դաւիթբաշեանը յաւելումն են Եղիշէից քաղած հատուածին։

49 Վերջերս «Մատենագիրք Հայոց» ժողովածոյի Ա հատորում (Ե դար, Բէյրութ, 2003) հրատարակուեց Գիտի Թղթի մեր պատրաստած քննական բնագիրը (էջ 1079-1090), ընդարձակ առաջաբանով (էջ 1075-1078):

50 Եղիշէի վասն վարդանայ եւ Հայոց պատերազմի, Ի յոյս անեալ...աշխատութեամբ Ե. Տէր-Միհնատեան, Է, էջ 197-199:

51 Յունարէն բնագիրը յայտնաբերուել եւ հրատարակուել է Ժերար Գարիտի կողմից (**G. Garitte**, *Documents pour l'étude du livre d'Agathange*, Rome, 1946, էջ 73): Նիկողայոս Մառը դրանից հրատարակուեց արտարակել էր արտասանակներ առաջ հրատարակել էր **Н. Марр**, *Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием*, С. Петербург, 1905. հմմտ. **Ա. Տէր-Ղեւոնդեան**, *Ազաթանգեղոսի արարական խմբագրութեան նորայայտ ամբողջական բնագիրը*, «Պատմա-բանասիրական հանդէս», 1973, թիւ 1, էջ 209-236): «Գրիգորի վարք»-ի տարբերակներ են նաեւ ատրակուած Միշէլ վան Էսբրոքի կողմից (**M. van Esbroeck**, *Le résumé syriaque de l'Agathange*, "Anal. Boll.", t. 95, fasc. 3-4, 1977, էջ 291-358. **M. van Esbroeck**, *Un nouveau témoin du livre d'Agathange*, REArm., t. VIII, 1971, էջ 139-221):

52 Պ. Մ. Մուրադեան, *Ազաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները*, Երեւան, 1982, էջ 10:

53 **G. Garitte**, *Documents pour l'étude du livre d'Agathange*, էջ 101-102:

54 Հայր Պօղոս վրդ. Անանեան, *Գրիգոր Լուսաւորչի ձեռնարկութեան թուականը եւ պարագայները*, Վեներտիկ-Ս. Ղազար, 1998, էջ 68-78: Հմմտ. **Ա. Ա. Ակոպյան**, *Албания-Алуанк*, էջ 126:

55 Գլուխ Ա.ժա, էջ 19.20-21. 20.2-6:

56 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, Մովսէս Դաւիթբաշեանի, էջ 97-98, 115. **Ա. Ա. Ակոպյան**, *Албания-Алуанк*, էջ 126-127, 182-184:

57 Համեմատական հրատարակութեան մէջ վրիպակ է սպրդել «և ձեռն» փոխանակ բոլոր ձեռագրերի «ի ձեռն» ընթերցման։

58 Գլուխ Ա.ժա, էջ 27.1-3. *Մատենագիրք Հայոց*, Բ. Ա, էջ 1087, նախ. 70:

59 **К. А. Каграманян**, *Источники "Истории*

страны Алуанк», էջ 22:

60 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, *Մովսէս Դաւիթբաշեանի*, էջ 155 («415-ին մօտաւորապէս»)։ Լ. Անանեան, *Հայոց գրերը*, Երեւան, 1984, էջ 381 («Եթէ Աղուանից քարոզութեան համար տանք մի տարի (423 թ.), յաջորդ տարին պէտք է դնել Վրաստան, ուր նոր էր թագաւոր նստել Արշիլը»)։ *Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР. III - IX вв.*, Москва, 1958, էջ 326 (ըստ հատուածի հեղինակ ակադեմիկոս Սուրէն Երեմեանի՝ 415-420 թթ. միջեւ)։ *Հայաստանի յարակից երկրների պատմութիւն*, Երեւան, 1992, էջ 179 (ըստ հատուածի հեղինակ Հենրիկ Սվազեանի՝ Ե դարի երկրորդ տասնամեակում)։

61 Կորին, *Վարք Մաշտոցի*, Բնագիրը...առաջաբանով եւ ծանօթութիւններով ի ձեռն Մ. Արեղեանի, Երեւան, 1941, գլ. ԺԷ, էջ 70, 72 («Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից։ Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ նոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատաբ հանդերձ...Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յամկ եղանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զատուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, ...Դարձեալ առաւել եւս երկիրացն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր... հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի։ Եւ յորժամ զայն արարեալ...ձեռնտու եւս եղեալ նմա սրբամատոց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն եկեղեցոյն Աղուանից։ Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իրեանց կացուցանէր, հանդերձ արամք քահանայի արքունական դրանն, որում անուն Յովնաթան կոչէին...»)։

62 Կորին, *Վարք Մաշտոցի*, գլ. ԺԵ, էջ 62:

63 Կորին, *Վարք Մաշտոցի*, գլ. ԺԶ, էջ 68:

64 Նոյն տեղում, էջ 70:

65 Նոյն տեղում, գլ. ԺԸ, էջ 72, 74:

66 Նոյն տեղում, էջ 74:

67 Մանրամասն տե՛ս Բ. Ուլուրաբեան, *Հիւսիսարեւելեան Հայաստանի նախաձայնագրական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը*, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1975, թիւ 2, էջ 149-164. Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսարեւելեան մարզերի վարչա-քաղաքական կացութիւնը 387-451 թթ.*, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1976, թիւ 2, էջ 77-95. **Б. Арутюнян**, *Административное деление закавказских владений Сасанидского Ирана*

согласно труду Елишэ, էջ 19-35. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 109-114:

68 Մովսիս Խորենացու Պատմություն Հայոց, Գ.ՃԳ, էջ 329: Պատմափոր տեղեկությունը այս կամ այն չափով հաւատարմորէն կրկնում են Մովսէս Դաւիթբանակցի (գլ. Բ.գ, էջ 117-118), Ստեփաննոս Օրբէլեանը (գլ. ԺԵ, էջ 39-40, յղելով նաեւ Պետրոս Սիմեոնի) եւ բազմաթիւ ուրիշ հեղինակներ:

69 Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 216-221:

70 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, Ս. Մաշտոց վարդապետ. Կենսըն եւ գործունէութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Մահակայ, Վիեննա, 1949, էջ 295-429; Ա. Մարտիրոսեան, Մաշտոց, (Պատմա-քննական տեսութիւն), Երեւան, 1982, էջ 332-344:

71 Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 219:

72 Աղուաներէն լեզուով գրուած վաղուց յայտնի մէկ տասնեակի չափ վիմագրերին վերջերս բարեբախտաբար աւելացան Սիմայի մի նորայայտ վրագրէն ձեռագրի մի քանի էջերում պահպանուած աղուանական կրկնագրերը, որոնք դեռեւս թարգմանուած չեն: Տե՛ս *Le nouveau manuscrit géorgien sinaïtique N SIN 50*, Édition en fac-similé, Introduction par Z. Aleksidze, Traduite du géorgien par J.-P. Mahé, Lovanii, 2001:

73 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի, Գ, էջ 77-78 («յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն եւ քաղաքաց, զոր ունէին Պարսիկքն յաշխարհին Աղուանից, ...Եւ բազումք ի նախարարացն Աղուանից եւ յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ եւ վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, ...գային ժողովէին եւ նոքա, եւ խառնէին ի գարս նոցա, եւ միաբանք եւ հաւասարք կցորդք լինէին գործոցն նահատակութեան»):

74 Նոյն տեղում, էջ 78:

75 Նոյն տեղում, է, էջ 198:

76 Նոյն տեղում, է, էջ 197:

77 Նոյն տեղում, է, էջ 198:

78 Նոյն տեղում, է, էջ 199:

79 **А. А. Кудрявцев, Древний Дербент**, Москва, 1982, էջ 83-84: **М. И. Артамонов, История хазар**, Ленинград, 1962, էջ 119-122. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 121-122: Հմմտ. դեռեւս՝ **В. В. Бартольд, Место прикаспийских областей в истории мусульманского мира**, Баку, 1925, էջ 24:

80 Մանամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 210-211:

81 Մանամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 212,223-224:

82 Համեմատական հրատարակութեան հեղինակը հետեւել է «Պատմություն Աղուանից»-ի Աց ենթախմբի ձեռագրերին (որի մայր գրչագիրը a-ից 1761 թ. արտագրել է Ղունկիանոս դպիրը) եւ Գ.ՃԵ գլուխը երկու մասի բաժանել (ընդօրինա-

կելով նաեւ Ղունկիանոսի յորինած գլուխների վերնագրերը), որը չի կարող արդարացուած համարուել: Ըստ այդմ՝ Գ գրքի վերջին գլուխների թուահամարները մէկով աւելացուել են եւ հասել մինչեւ ԻԴ: Ժիշտը պէտք է լինի ԻԳ:

83 **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 132-135:

84 Կորիւն, Վարք Մաշտոցի, գլ. ԺԷ, էջ 72: Բաղասականի տեղադրութեան մասին մանրամասն տե՛ս Բ. Ուլուքբեան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1971, թիւ 1, էջ 178-182. **Б. Арутюнян, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ**, էջ 31-34. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 100-104:

85 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի, Գ, էջ 70-71: Մանրամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, 115-117, 127:

86 Համեմատական հրատարակութեան մէջ բաց են թողնուած գրեթէ բոլոր ձեռագրերում առկայ կաթողիկոսական թուահամարները, որը չի կարելի արդարացուած համարել:

87 1289 թ. Սաղմոսավանքում արտագրուած a ձեռագրում (ՄՄ, թիւ 1531) բնօրինակի բոլորգիր «եղեւ» եւ «տէր» բառերի միջեւ վերեւում ուշ նօտրգրով աւելացուած է «եպիսկոպոս» (*եպս*) բառը (թերթ 375թ, Բ սիւնակ): Ամենայն հաւանականութեամբ դա կատարուել է նոյն Ղունկիանոս դպրի կողմից, քանի որ առաջացած «եպիսկոպոս տէր» ընթերցումն առկայ է Ա խմբի բոլոր ձեռագրերում՝ սկսած 1761 թ. Ղունկիանոսի կատարած ընդօրինակութիւնից: Ցաւօք սրտի, այն մտել է նաեւ համեմատական հրատարակութեան մէջ:

88 Գլուխ Գ.իգ, էջ 342.15-16: Բերում ճախարհատութեան վերջին բառերը՝ «զորպէսն չգիտեմք», անկասկած պատկանում են Մովսէս Դաւիթբանակցու, եւ դա ուղղակի ցուցիչներից մէկն է գլխի հիմքում առանձին սկզբնաղբիւրի ընդօրինակման: Բնագրում պէտք է գրուած լինէր պատմիչին անձանօթ՝ «որ եւ Հոնացն եղել տէր՝ հայրապետական շնորհիւ», որպէսզի նա իր կողմից աւելացներ՝ «զորպէսն չգիտեմք»: Մանրամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 211:

89 Հմմտ. ծան. 21: ԺԸ դարի «բնագրագէտ» Ղունկիանոսը այս հատուածում Գրիգորիսին առաջ է տարել եւ դրել Եղիշայ առաքելից լետոյ, սակայն իր տեղում էլ թողել է Գրիգոր կաթողիկոսի անուն: Վերջինս, ցաւօք սրտի, մտել է ոչ միայն Ա խմբի բոլոր ձեռագրերի (բացի h-ից), այլեւ երկի հրատարակութիւնների, այդ թում՝ համեմատականի մէջ (էջ 342.14):

90 Տե՛ս Մաղաքեա արքեպ. Օրմանեան, *Ազգապատմ.* հ. 1, Վաղարշապատ – Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 27-58:

91 Տե՛ս նոյն տեղում, էջ 55:

92 Մանրամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-**

Алуанк, էջ 211, 223-225:

93 Գլուխ Ա.իգ, էջ 94.11-15: Նախկինում այս ակնյայտ մանուկները պատճառ է եղել, որպէսզի մենք ենթադրենք «Վաչագանի վէպի» եւ Աղուանի կանոնների բնագրական կապի մասին (**А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 185), սակայն ներկայումս պէտք է հրաժարուել այդ պնդումից: Տեղին նշենք, որ «Վաչագանի վէպ»-ում եկեղեցական ժողովների առատութիւնը (Կապաղակում՝ Ա.ժթ, էջ 61.11-12. Դիտակաւում՝ Ա.իա, էջ 67.4-9. Քարուէճում՝ Ա.իգ, էջ 84.10-21) չպէտք է շփոթութեան պատճառ լինի: Ըստ առաքելական կանոնների (ԼԵ)՝ եպիսկոպոսներին պատուիրուած էր տարեկան երկու ժողով գումարել (*Կանոնագիրը Հայոց*, Ա, էջ 84-85: Հմմտ. հայր Պօղոս վրդ. Աճառեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը, էջ 75): Ըստ այդմ՝ նշուած հանգամանքը թերեւս աւելի շատ «Վաչագանի վէպի» տեղեկութիւնների հաւաստիութեան ցուցիչներից մէկը պէտք է համարել:

94 Տե՛ս Բ. Ուլուքբեան, *Դարձեալ Աղուանի ժողովի գումարման տարեթուի մասին*, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երեւան, 1969, թիւ 6, էջ 55. **Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк**, Перевод с древнеармянского, предисловие и комментарий Ш. В. Смбатяна, Ереван, 1984, էջ 190, ծան. 97:

95 Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, Մովսէս Դաւիթբանակցի, էջ 139:

96 Հմմտ. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 185: Հայոց կանոնագրի քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբեանի հատակ ենթադրութիւնը (հ. Ա, էջ 346) մերժում է նաեւ բնագրերի համեմատութեան արդիւնքում, որը կատարուել է մեր կողմից Աղուանի կանոնների քննական բնագրի կազմման ժամանակ (տե՛ս *Մատենագիրը Հայոց*, հ. Գ, Զ-Է դարեր, Աճառեան, 2004):

97 Հմմտ. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 186-187:

98 Գլուխ Ա.իա, էջ 71.16-17: Բ խմբի ձեռագրերը այս տեղում Մանասէի փոխարէն տալիս են Մատթէ երեցի անունը. «Ջուարճացեալ արքայ՝ վաղվաղակի առաքել ՎՄատթէ (1 ՎՄատթէ) էրեց եւ ղԵովել սարկաւազ յԱմարաս, նախքան զիւր երթալն»: Տուեալ դէպքում կարեւոր չէ, թէ որ խմբի ընթերցումն է բնօրինակայինը:

99 Գլուխ Ա.իա, էջ 73.1-2: Բ խմբի ձեռագրերը նույն այս նախադասութիւնը: Նախապատուութիւնը տալիս ենք a ձեռագրին, քանի որ դժուար թէ որեւէ գրիչ (տուեալ դէպքում a-ի գրիչը) յորինէր նման պատասխանատու տեղեկութիւն, իսկ արտագրութեան ժամանակ ինչ-ինչ արտայայտութիւններ վրիպումով բաց թողնել կամայական (այդ թում՝ Բ խմբի մայր ձեռագրի) գրչի համար սովորական բան է:

100 Հմմտ. *Очерки истории СССР. Первобытно-*

общинный строй и древнейшие государства на территории СССР, Москва, 1956, էջ 484. **К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании**, էջ 142. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 36, ծան. 74:

101 Բ. Ուլուքբեան, *Դրոսագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.)*, Երեւան, 1981, էջ 141. Վ. Բալայեան, *Արցախի պատմութիւնը հնադարից մինչեւ մեր օրերը*, Երեւան, 2002, էջ 83: Դիտակաւանի տեղադրութեան համար աղբիւրներում ունենք միայն մէկ վկայութիւն. այն մօտ է գտնուել Ուտի (= Ուտի-Առանձնակ) գաւառի Կաղանկատոյք գիւղին: Մովսէս Դաւիթբանակցու երկում արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» աղբիւրում (գրուած 630-632 թթ. միջեւ. մանրամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 189-196) Հեռակ կայսեր Կովկասեան արշաւանքի նկարագրութեան մէջ մասնատրապէս ասում է. «Իսկ իբրեւ եկն եհաս զարն Հոովմայեցոց... եւ բանակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն գեղջն Կաղանկատոյք (a Կաղանկատոյք)»: Եւ անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն *Տրոտայ՝ մօտ ի գիւղն Դիտական* (bclr Դիտական)» (գլուխ Բ.ժ, էջ 132.21-133.3): Նշուած տեղը կարող է համարուել ինչպէս Ուտիքի, այնպէս էլ Արցախ նահանգի տարածք: Աւանդաբար Դիտականի աներակները ենթադրում են Թալիշ գիւղից մի քանի կմ հեռու (Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեան, *Մանագրաբնութիւն ի Մեծն Հայաստան*, Բ, Տիփլիս, 1858, էջ 249-250. Մակար Բարխուդարեանց, *Արցախ*, Բագու, 1896, էջ 297. *Դիան հայ վիմագրութեան*, արակ V, *Արցախ*, Կազմեց Ս.Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 102): Տեղին նշենք, որ մեր կարծիքով՝ Սարգիս Ջալալեանցի ընթերցած «Դիտականի» աներում եկեղեցու մուտքի հիսիսային կողմի վիմագրում («Եւ՝ Միսիթար՝ Մքելայ որդի, տուի զիմ այգետեղին լեկեղեցիս *Գեռ Այտանու* տէրանց վկայութեամբ...») ընդգծուած բառերի փոխարէն արդարացուած կը լինի ենթադրել «ԳԵՏԱԹՎԱՆՈՒ» բառի եղած լինելը՝ որպէս Գիտական-Դիտական անուան մի տարբերակ:

102 «Դիտական» կամ «Գիտական» (երկու անգամ) տարբերակը տուող a ձեռագրում այս հատուածը բացակայում է: bclrz ձեռագրերը բացի այս «Դիտական»-ից մնացած բոլոր հատուածներում տալիս են «Դիտական» ձեռը: «Դիտական»-ի առաջացման պատճառը հաւանաբար յաջորդող «անուն» բառի առաջին վանկն է եղել. գրիչը կամ նրան թելադրողը իրար կողքի տեսել է երկու «ան» եւ համարել, թէ դրանցից առաջինն աւելորդ է:

103 Տե՛ս, օրինակ, *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. Բ, Երեւան, 1984, էջ 193: Մեզ յայտնի միակ բացառութիւնը Եղգեթ Մարկվարտն է, որը նշում

